№ 48 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 6

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 6 № 48

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատողին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ՄՇԱԿ“
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ 1907 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ
(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՊՐԵՄԻԱ! 1000 ՏՈՒՓ ՇՕԿՕԼԱԴ 1 ՓՈՒՆՏԱՆՈՑ ՊՐԵՄԻԱ!
„ՇՕԿՕԼԱԴ ԵԱՐՎԵԼ“
Ծախվում է ամենակարճ ժամանակամիջոցում
Պրեմիան 25 կոպ. ՄԻՆՉԵՒ 50 րուբ. կանխիկ փողով։
1000 տուփի մէջ միայն 100 տուփն է պրեմիայով։
Գները՝ ինչպէս սովորականը, նոյնպէս և պրեմիայով
Տուփը 1 րուբլի։
Вельяминовская № 4.
(կ. ե. չ. հ. շ. կ.) ա 6—6

V-ՐԴ ԴԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
Ազատութեան դրօշակիր Վարդանին Ղևոնդ երէցը օրհնում է։

Պատմական այս պատկերը մեծադիր՝ 70×51 սանտ. վաճառվում է երկուշաբթի, մարտի 5-ից սկսած դարձեալ իր իսկական գնով, այն է՝ հատը 1 ր. 50 կ.։

Հայ պարբերական թերթերի բոլոր բաժանորդներին, միայն ներկայ մարտ ամսվայ ընթացքում, եթէ նրանք իրանց պատուէրների հետ ուղարկեն և տպագրված հասցէն, այդ պատկերի հետ կուղարկվի նրանց «ԱՂԲԻՒՐԻ» և «ԳԵՂԱՓՆՋԻԿԻ» առաջին №№-ը ձրի։

Շարունակվում է
ԱՂԲԻՒՐԻ, ԳԵՂԱՓՆՋԻԿԻ
Բաժանորդագրութիւնը. անակնկալ յաւելուածներով պրէմիաներով, յոբելեանական Աբով Ալմանախով. տարին 5 ր. Արտասահման 10 ր.։
Հասցէն՝ Тифлисъ, редакція «Агбюръ»
աւ. 1—5

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
ՄԱՍՆԱԳԷՏ
սիֆիլիս, միզային, վեներական եւ մորթու հիւանդութիւնների։
Ընդունում է ցերեկ. 1—3 ժ., երեկ. 6—8 ժ.։
Սօլօլակ, Բեհբութեան փող. № 33։
(ա. օ.) աւ. 11—100

ԷՄՄ. ՔԱՀ. ՆԱԶԱՐԵԱՆՑ
Նոր գրքոյկներ
I. Լեւ Տօլստօյի գրուածքներից՝ հեղինակի պատկերով
1. «Աղօթք», 8 եր. 5 կոպ.։
2. «Սէր», 16 եր. 8 կ.։
3. «Սեռային յարաբերութիւն», 30 եր. 12 կ.։
II. Պրոֆ. բժշ. Լէօ Բուրգերշտէյն՝
1. Առողջապահիկ կանոններ՝ բոլոր ուսումնարանների աշակերտների ու աշակերտուհիների համար 20 եր. 7 կ.։
Դիմել՝ 1. Москва, свящ. Э. Назарьянцъ. 2. Тифлисъ, Центральная Книжная Торговля 3. Баку, Книжный магазинъ «Сатрудникъ»։
Մոսկվայից դուրս միմիայն տասնեակներով են ուղարկվում, և ուզած գրքոյկից՝ գնողը վճարում է իսկական գնից 1 կոպ. պակաս։
Իսկ բոլոր 4 գրքոյկներից միասին գնողը՝ իւրաքանչիւր 10-ին վճարում է 2 ր. 50 կ.։
Երկու դէպքում էլ Թարգմանողին դիմողը ճամփի ծախս չէ վճարում։
աւ (և. հ.) 5—6

Բ. Գ. Օրտցիսի
ՋԷՆՔԻ ՄԱԳԱԶԻՆ
ՆԵՐԿԱՅ ՏԱՐՎԱՅ
մարտի 1-ից
ԲԱՑՎԱԾ Է
Գօլովինսկի պրօսպեկտում արական I գիմնազիայի դիմաց, Փառքի տաճարին կից։ Ամեն տեսակ զէնքերի ՃՈԽ ընտրութիւն։
(հ. շ. կ.) ա. 3—3

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
„ՍԱՓՐԻՉ“
հումոր, սատիրիկ-սիմվոլիք
ամսաթերթի
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
Լոյս տեսաւ
VI-րդ համարը,
որը և ուղարկվեց բաժանորդներին նաև
„ԱՆԻ“
հրատարակչ. ընկեր. բաց նամակների I սերիան, 8 հատ, գինն է 60 կոպ.։
Բաժանորդներին ուղարկվեց ձրի իբրև «Սափրիչի» 1 պրէմիան։
Տարեկան բաժանորդագինն է պրէմիայով 2 րուբլի; իսկ Անդրկասպեան երկրի և արտասահմանի համար 2 րուբլի 50 կոպ.։
Հասցէ՝ С. П. Б. Казанская 46 18.
«ՍԱՓՐԻՉ»-ի խմբագրութիւն
ե. շ. աւ. 10—25

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Անաստասեէվսկայա փողոց, տուն № 18, հեռախօս 966։
Հիւանդ կանանց ընդունելութիւնը ամեն ժամանակ նախորդ յայտարարութեան համաձայն։
Երթևեկ հիւանդների ընդունելութիւնը ամենայն օր ցերեկվայ ժամը 11—12, հետևեալ բժիշկների ձեռքով.
Ա. Ր. Ֆիշէր.—երեքշաբթի, շաբաթ։
Ա. Գ. Բարսուկօվ.—չորեքշաբթի։
Ս. Պ. Շահ-Պարոնեան.—կիրակի, հինգշաբթի։
Ա. Ա. Նովիցկի.—երկուշ. ուրբաթ։
Երեխաների հիւանդութիւնների համար Ն. Զ. Ումիկօվը հիւանդ երեխաներին ընդունում է երկուշաբթի և հինգշաբթի օրերը, 2—3 ժ.։
Հիւանդանոցին կից կատարվում են քիմիկօ-միկրօսկօպիական հետազօտութիւններ՝ մէզի, խորխի և այլն։
Ծծմայրերի քննութիւն, ծաղկի պատուաստում և այլն։
(հ. շ. և.) 13—50

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Մշտական մահճակալներով
Ելիզավետինսկայա փողոց № 79, տելեֆօն 1026.
Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր
ՄԻՔԱՅԵԼ ԱՂԱՋԱՆԵԱՆ.—11—12 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ.—11—12 ժ.—ջղային, ներքին հ. և էլէքտրօբուժութիւն։
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ.—12—1 ժ. ներքին և երեխայոց հ.։
Ի. Ե. ԱԻԵՏԻՍԵԱՆՑ.—12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ս. Ա. ԼԻՒՐԻ.—12—1 ժ. քթի, կոկորդի և ականջի։
Մ. Գ. ԿԻՄՈՆՏ.—1—2 ժ. վիրաբուժական հ.։
Գ. Ա. ԲԷՅԵՐ.—1—2 ժ. երեխայոց և ներքին հ.։
Ի. Ն. ԹՈՒՄԱՆՕՎ.—5—6 ժ. (երեկոյեան)-կանանց հ. և մանկաբարձութիւն։
Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում են միկրոսկօպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ծծմայրերի ընտրողութիւն։
Բժշկական խորհուրդի համար վճարը 50 կոպ. Օպերացիաների և համախորհուրդների վճարը ըստ համաձայնութեան։ Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին համերներից։
աւ. ե. հ. կ. 31—100

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ռամկավար կուսակցութիւնը. Վերջին տեղեկութիւններ. Դումայի շէնքի կատաստրօֆայի մանրամասնութիւնները. Պետական Դումայի շուրջը. Լուրեր Պետական Դումայի մասին. Մամուլ. Տեղեկութիւններ գաւառից. Գազան մարդիկ. Նամակ Շուշուց. Դատաստանական դահլիճից. Նուխու գպրոցի առիթով. Երեկոյթ Բաթումում. Հասարակական Դատաստանին. Ընտրութիւնների շուրջը. Նամակ Աստրախանից. Ներկայացուցչական կառավարութիւն. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

I

Հայ ռամկավար կուսակցութեան հիմնադիրները Թիֆլիսում, վերջին շաբաթները մասնաւոր խորհրդակցութիւններ կազմելով, մշակում են գործունէութեան ծրագիրներ։

Թէ ընդհանուր քաղաքական և թէ մեր երկրի հասարակական խնդիրները պահանջում են գիտակցական վերաբերմունք և որոշ դիրքեր։

Կուսակցութիւնը աշխատում է պարզել այդ խնդիրները և իր հիմնական դաւանանքի համաձայն տալ իր կարծիքները նրանց մասին։

Պահանջվում է լուրջ և մեծ աշխատանք։ Պահանջվում է կուսակցութեան հիմնադիրների եռանդուն գործակցութիւնը, որպէսզի կարելի լինի բաւարար կերպով իրագործել առաջադրած նպատակը։

Եւ ահա նախնական խորհրդակցութիւններով սկիզբն է դրվում այն ապագայ գործունէութեան, որը պէտք է տեղի ունենայ հասարակական աւելի ընդարձակ խաւերում, գրաւելով ինտելիգենցիայի և ժողովրդի կենսունակ, գիտակից ու ստեղծագործական տարրերը՝ կատար ածելու այն քաղաքական-կուլտուրական նպատակը, որ դրել է իր առաջ։

II

Մեր ազգաբնակութիւնը, շնորհիւ վերջին տասնամեակի ծանր և տառապալից տարիների, շնորհիւ բիւրօկրատական խեղդող և ճնշող ռեժիմի, շնորհիւ մեր ներքին կեանքի աննպաստ հանգամանքների, անկարող եղաւ անձնատուր լինել քաղաքական և կուլտուրական խնդիրների ուսումնասիրութեան ու մշակութեան։

Եւ այժմ, երբ պահանջվում է, որ մենք ներկայացնենք մեր նախագծերը, մեր ծրագիրները, մեր պատճառաբանված պահանջները, մենք չունենք պատրաստ նիւթ ներկայացնելու ո՛ր հարկաւորն է, չունենք մշակված յատակագծեր գործնական քայլեր անելու համար։

Որ մեղաւոր են այդտեղ արտաքին հանգամանքները, մենք այդ ընդգծում ենք, բայց միևնոյն ժամանակ չենք կարող չը շեշտել և այն տխուր երևոյթի վրայ, որ մեր ինտելիգենտ տարրերը բաւականաչափ տոկունութիւն և բարոյական ոյժ չունեցան իրանց կուլտուրական առաքելութիւնը առաջ տանելու նաև աննպաստ օրերում և այսօրվայ համար պատրաստ ու կազմ լինելու։

Այո, մշակված, պատրաստված ուսումնասիրութիւններ շատ քիչ կան ասպարէզում։

III

Ռամկավար կուսակցութիւնը, որ իրան նպատակ է դրել նպաստել ժողովրդական ազատութեանը, և բեղմնաւոր կուլտուրական գործունէութեան հաստատմանը մեր կեանքի մէջ, ունի իր առաջ մի շարք կարևոր հերթական խնդիրներ, որոնցով նա պարտաւոր է զբաղվել առանց յետաձգելու։

Կեանքը չէ սպասում և շարժվում է առաջ, լաւ ու վատ։ Եթէ դուք անկարող կը լինէք ժամանակին տալ նպատակայարմար ցուցումներ և նպաստել նրան ընդունելու օգտակար ընթացք, նա կը հետևի իւրերի թելադրութիւններին և գուցէ կընկնի անվերջ խարխափման ճանապարհի վրայ։

Այդ կեանքը սպասում է իր մտածողների հեղինակաւոր խօսքերին, խորհուրդներին, ցուցումներին։

Ռամկավար կուսակցութեան պատկանողները եթէ եռանդուն կերպով կը մօտենան գործին և կը տան լուրջ գործունէութեան ապացոյցներ, նրանք այն ժամանակ կը ստանան կեանքի համար այն նշանակութիւնը, որը պէտք է ունենայ կենսունակ քաղաքական կուսակցութիւնը։

Աշխատանքի դաշտը ընդարձակ է և ժողովրդի պահանջը մեծ։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Խանքենդ աւան, 1 մարտի

Մեր շրջաններում Թուրքը դիւանագիտութեան մէջ առաջին տեղն է բռնում իր հնարագիտութեամբ, ճարպիկութեամբ, առաւելապէս օրէնքը հասկանալով. իսկ ընդհանրապէս հայը սարսափելի կերպով կաղում է։

Յուլիսի 15-ին 1906 թ. հարիւրաւոր զինված Թուրքեր առաւօտեան արշալոյսը դեռ չը բացված մտնում են յարձակվելու Քարագլուխ հայ գիւղի վրայ։ Դիրքապանները ամառվայ ծանր աշխատանքից յոգնած՝ մի փոքր դիրքից հեռանալով՝ մի արտի մէջ հանգիստ քուն են մտնում։ Թուրքերը անցնում են դրանց կողքով առանց շշուկ բարձրացնելու և հետզհետէ մօտենում են գիւղին յանկարծակի ներս թափվելու և սրախողխող անելու ամենքին։ Ինչպէս է պատահում, դիրքապաններից մէկը արտի մէջ կանգնում է դիտելու շրջակաները և նկատելով Թուրքերին, սուս ու փուս զարթեցնում է ընկերներին։ Սրանք փախուստ են դիմում դէպի գիւղը. Թուրքերը տեսնում են. սկսվում է հրացանաձգութիւն։ Հրացանների ձայների վրայ ամբողջ գիւղը ոտքի է կանգնում, ամենքը զէնք են վերցնում, դիրք մտնում։ Թուրքերի և հայերի մէջ սկսվում է սարսափելի պատերազմ։ Հայերը թէև սակաւաթիւ, սակայն անպատւութիւն են համարում անձնատուր լինել։ Հայ քաջերը իրար յետևից ընկնում են գնդակների տարափի տակ, մէկ, երկուս, երեք և վերջապէս ութերորդը։ Հայերը յուսահատվում են և հէնց այն է ուզում են անձնատուր լինել, ահա այդ ժամանակ գիւղի արևմտքից, Թուրքերի ճակատից սկսվում է օգնութեան եկող հայերի կրակը։ Թուրք խումբը շփոթութեան մէջ, իրար խառնված՝ թողնելով իրանց ձիերը և դիակները, փախչում են։ Հայերը հետևում են դրանց և բերում ձիաներին։ Այդ ձիաներից մէկը ընկնում է ղլիջբաղեցի տղայի ձեռքը։ Ամբողջ ոստիկանութեանը յայտնի էր, որ Քարագլխի վրայ յարձակումը եղել է, և այլն։ Ղլիջբաղեցին այդ ձին նստելով այս և այն կողմն է գնում, աշխատանքի։ Ասկերանում Թուրքերը ճանաչում են և ահա մի խնդիրքով դիմում են գեներալ նահանգապետին առարկելով, որ ղլիջբաղեցին Ասկերանում սպանել է իրանց Թուրք եղբօրը. սէյիդլուեցի այս ինչին, ձին խլել, որ նա Ղլիջբաղի դաշնակցութեան կօմիտեան է, և այլն։

Գեներալ նահանգապետը հրամայում է ինչպէս էլ լինի ձերբակալել ղլիջբաղեցուն։ Ստրաժնիկները թափվում են նրան ձերբակալելու, բայց նա փախչում է։ Ստրաժնիկները ձերբակալում են տղայի հօրը և կնոջը։ Այդ նկատելով նա՝ անձնատուր է լինում։ Նրան ձերբակալած ձիու հետ բերին Խանքենդի։ Մի համեստ, խեղճ գիւղական աշխատող տղայ է։ Նա պատմում է, որ ձին Քարագլխի կռւումն է իր ձեռքն ընկել և Թուրքը, հաւանական է, սպանվել է այդ կռւում, որ ինքը Ասկերանում ամենևին Թուրք չէ սպանել։ Նոյն օրը եկան ղլիջբաղի քահանան, առաջաւոր մարդիկ և հաստատեցին նրա ասածը։ Տեսնենք հայի ասածին հաւատալու՞ են, և կարծակէ՞ն նրան, թէ սէյիդլուեցի Թուրքի, որ սպանվել է հայ գիւղի վրայ յարձակվելու ժամանակ, պատճառով կը պատժեն։

***

Հին-Նախիջևան, 2 մարտի, 5 ժ. 30 ր. երեկ.

Իմ հարցին՝ ուսուցիչ Մելիք-Մուսեանցը Ագուլիսից հեռագրում է, որ երեք շուրուտեցի հայեր և մի նորահարս, Դաշ-արխի և Քեարիմ-գիւլիդիզի միջև, տասն օր է ինչ անյայտացել են։

Իշխանութեանը երէկվայ հասած տեղեկութիւններից հաստատվում է, որ տղամարդիկը սպանված են Թուրքերի ձեռքով, իսկ նորահարսին կենդանի տարել են։

Նորահարսին տանելու տեղը վարմունքը, Թուրքերի կողմից, աննկարագրելի կերպով խոցել է հայերի պատուասիրութիւնը՝ սպառնալով հազիւ-հազ վերականգնած խաղաղութեանը։

Գաւառապետը մեկնել է դէպքի վայրը։

Լևոն վարդապետ

Շուշի, 2 մարտի։ Ղարաբաղի հայոց կօնսիստօրիայում զեղծում կատարող անդամ-գանձապահ-գործակալ Եղիշէ քահանայ Թարխանեանցը վիճակի առաջնորդի հեռագրական կարգադրութեամբ արձակվեց իր պաշտօններից։ Գանձապահութիւնը յանձնվեց Մուշեղ քահանային, իսկ գործակալութեան համար կայանալու է ընտրութիւն։ Ցաւված ժողովուրդը հանդարտվեց։

***

Պետերբուրգ, 4 մարտի։ Եւրօպէյսկայա հիւրանոցում, գիշերվայ ժամը 3-ին, Վօստօչնօ-սիբիրսկի գնդի պօրուչիկ Կօզլօվը, օֆիցերների մի մեծ ընկերակցութեան մէջ, քաղաքական հարցերի և մասամբ Կովկասի աւտօնօմիայի վերաբերմամբ տեղի ունեցած վիճաբանութիւնից գրգռված, սրով կտրեց Քութայիսի ազնուականների պարագլուխ իշխան Նիժարաձէի ականջը։ Վերջինս ատրճանակի երկու հարուածով երկու վէրք հասցրեց Կօզլօվին՝ մէկը կրծքին, իսկ միւսը պարանոցի վրայ։ Կօզլօվը անզգայ դրութեան մէջ տարվեց Նիկօլայեվսկի զինւորական հիւանդանոցը։ Նրա կեանքին վտանգ է սպառնում։ Նիժարաձէն էլ տարվեց Մարիինսկի հիւանդանոցը։

(«Հ. Գ.»)

Պետերբուրգ, 4 մարտի։ (Պաշտօնական)։—Ներքին գործերի մինիստրը փետրվարի 17-ին 1907 թ. № 11 գրութեամբ ուղարկել է նահանգապետներին հետևեալ շրջաբերականը. «Ինչպէս տեղեկութիւն է հասել ներքին գործերի մինիստրութեանը, Պետական Դումայի ընտրութիւններից յետոյ գիւղական ժողովուրդը մի քանի տեղերում՝ յանցաւոր ագիտացիայի ազդեցութեան տակ՝ նորից հակումն է ցոյց տալիս կարգը խանգարելու և բռնութիւններ գործելու իրանց հարևան կալուածատէրերի և ունևոր գիւղացիների ունեցուածքի վերաբերմամբ։ Չը մտածելով անգամ, որ նորից կարելի է թոյլատրել 1905 և 1906 թւականներում տեղի ունեցած ապօրինութիւնների կրկնողութիւնը, չեմ կասկածում, որ, իր ժամանակին ձեռք առած խիստ միջոցներով ագիտատորների և հասարակական խաղաղութեան ու հանգստութիւնը խանգարողների դէմ, ովքեր որ էլ լինեն դրանք, տեղական իշխանութիւնները ամեն ժամանակ կարող են որևէ կերպ առնել խոշոր անկարգութիւնների առաջը և, պահպանելով հասարակական կեանքի խաղաղ ընթացքը, ապահովել ժողովրդի անձը և գոյքը։ Սրանով պարտք եմ համարում դարձնել ձեր ուշադրութիւնը համապատասխան կարգադրութիւններ անելու շուտափոյթ անհրաժեշտութեան մասին, ձեր ստորադրեալ պաշտօնական անձերին յայտարարելով, որ մեղաւորները, որոնք միջոցներ չեն ձեռք առնի անկարգութիւնների առաջն առնելու և հէնց ծագած ժամանակը ճնշելու նրանց, նոյնպէս և չեն պաշտպանի մասնաւոր անձերի կեանքը և գոյքը բռնութիւնների ենթակայ լինելուց, իսկոյն և եթ կենթարկվեն պատասխանատուութեան՝ զրկվելով պաշտօնից, նոյնպէս և յանձնվելով դատարանի։ Հաղորդելով այս մասին, ես հաւատացած եմ, որ դուք, գիտակցելով Բարձրագոյն իշխանութեամբ ձեր վրայ դրված պարտականութիւնների բոլոր կարևորութիւնը, կը գործադրէք ձեր բոլոր էներգիան և հմտութիւնը, որպէս զի պահպանվի կարգը նահանգի սահմաններում։ Կարևոր եմ համարում սրա հետ միասին նախազգուշացնել ձեզ, որ գիւղացիների մէջ տեղի ունեցող անկարգութիւնների դէպքում նախ և առաջ պատասխանատու է նահանգի կառավարիչը»։

(«Հ. Գ.»)

ԴՈՒՄԱՅԻ ՇԷՆՔԻ ԿԱՏԱՍՏՐՕՖԱՅԻ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Դումայի նիստերի դահլիճը մի ցաւալի տեսարան է ներկայացնում։ Ամբողջ առաստաղի համարեա երեք քառորդ մասը՝ տախտակներով ու սուաղով, ծեփով միասին. փուլ է եկել։

Առաստաղի փլուածքը տեղի է ունեցել կենտրոնում։ Ընկած ահագին խառնուրդը՝ ընկնելուց բաժանվել է երկու, գրեթէ, հաւասար կտորի և թափվել է ձախակողմեան, կենտրոնի և աջակողմեան մի մասի պատգամաւորական տեղերի վրայ։ Առաստաղի թափված մասերը ամբողջապէս ծածկել են մի քանի տասնեակ ջարդ ու փշուր եղած և ծռմռված պատգամաւորական բազկաթոռները։ Առաստաղի պոկված մասը երկար, քառանկիւնաձև է և մի քիչ էլ դէպի աջ թեքված։ Ընկնելու ժամանակ ջախջախված են ջահերը, մանաւանդ անպէտքացել է կենտրոնի մեծ ջահը։ Ծռված և կոտրված պատված բազկաթոռների թիւը 300-ի է հասնում. եթէ կատաստրօֆան պատահելու լինէր նիստի ժամանակ, փլատակների տակ պիտի մնային ոչ պակաս քան 200 պատգամաւորներ։ Ամեն տեղ թափթփված են սուաղի ահագին կտորներ, որոնցից մի քանիսը նոյնիսկ տասնեակ փութերի են հասնում։ Փլուածքից առաջացած փոշին, կտորտանքները, ջարդ ու փշուր եղած լամպերը ծածկել են մինիստրների օթեակներն ու բոլոր ամբիօնները։ Պատգամաւորներից շատերը փլատակների տակից դուրս են հանում թղթերը։

Շատ լուսանկարիչներ յաւերժացնում են փլատակների տխուր պատկերը. Նիստը փակելուց յետոյ նախագահը հրաւիրվել է մինիստրական պաւիլիօնը, որտեղ սպասում էին նրան Ստոլիպինը և նիստին ներկայ եղող մինիստրները։ Կարճատև խորհրդակցութիւնից յետոյ վճռել են պոկել առաստաղի սուաղների չը փլված մնացորդներն էլ, ապա առաստաղը ամբողջապէս ծածկել կտաւով, որը հնարաւորութիւն կը տայ մարտի 7-ից վերսկսել նիստերը։ Ճարտարապետների ասելով փլուածքի պատճառը բացատրվում է նրանով, որ նիստերի դահլիճի շէնքը առաջներում ծառայում էր իբրև ձմեռային պարտէզ, և երբեք չէր տաքացվում։ Առաջին Դումայի նիստերը տեղի ունեցան ամառը, այնպէս որ դարձեալ չէին վառում։ Այժմ վառում էին, և տաքութեան ու օդհանութեան շնորհիւ, կոնաձև մեխերով ամրացրած փայտէ գերանները, բնակարանի ջերմութեան տարբերութեան շնորհիւ, անխուսափելիօրէն պէտք է իրանց ծաւալի մէջ փոփոխութեան ենթարկվէին, որի հետևանքը բնականաբար պէտք է լինէր առաստաղի սուաղի փուլ գալը։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 մարտի։ Օրվայ ամբողջ երկրորդ կէս մասը պարլամենտական բոլոր ֆրակցիաների նիստերը նորից նուիրված էին կառավարութեան յայտարարութեան առիթով բռնելիք տակտիկայի լուծման հարցին։ Սօց.-դեմօկրատների յամառութիւնը բացարձակ զայրոյթ է պատճառում. սակայն սօց.-դեմօկրատները ոչ միայն չեն ուզում հրաժարվել իրանց դիտաւորութիւնից, այլ ընդհակառակը պատգամաւորութիւն ուղարկեցին աշխատաւորների մօտ առաջարկելով անջատվել օպպօզիցիայից և յարել սօց.-դեմօկրատների ընդունած որոշմանն՝ կառավարութեան յայտարարութեանը պատասխանելու անհրաժեշտութեան մասին։

Երեկոյեան Պետական Դումայի նախագահի օգնական Բերեզինի նախագահութեամբ կրկին անգամ նիստ ունեցան օպպօզիցիայի բոլոր պարլամենտական ֆրակցիաները առանց խտրութեան։ Ս.-դեմօկրատները բացատրեցին իրանց անզիջողութիւնը նրանով, որ լռութիւնը և առանց պատճառաբանելու, յայտարարութիւնից յետոյ ուղղակի գործին անցնելը, կարող է բացատրվել իբրև Դումայի համերաշխութիւն մինիստրական գործունէութեան հետ։ Ժողովրդական սօցիալիստները յայտնեցին, որ հակառակ երեկվայ խոստմանը համաձայնեցնել իրանց որոշումը օպպօզիցիայի մեծամասնութեան հետ, նրանք իրանց վերապահում են ազատ գործելու իրաւունքը։ Երկարատև, ապարդիւն վիճաբանութիւններից յետոյ, որի ժամանակ կադետները իբրև զիջում սօց.-դեմօկրատներին ընդունեցին չը պատճառաբանված օրակարգի մէջ յիշատակել, որ Պետական Դուման իրան իրաւունք է վերապահում վերադառնալ մինիստրների գործունէութեան գնահատութեան խնդրին, և նրանից յետոյ, երբ սօց.-յեղափոխականների առաջարկը — հեռանալ դահլիճից սօց.-դեմօկրատների ճառախօսութեան դէպքում, մերժվեց. ժողովը փակվեց այն պայմանով, որպէսզի ֆրակցիաների վերջնական համաձայնութիւնը տեղի ունենայ լիազօրութիւնները ստուգելուց յետոյ, կառավարութեան յայտարարութիւնից առաջ եղած ընդմիջումի ժամանակ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մարտի։ Կատաստրօֆայի պատճառով Դումայի նիստը տեղի կունենայ այսօր Տաւրիկեան պալատի Եկատերինեան դահլիճում։

Նիստը սկսելուց առաջ, պատգամաւորներից շատերի ցանկութեամբ գոհացողական մաղթանք կը կատարվի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մարտի։ Նիստը բաց է անում Գօլօվինը Եկատերինեան դահլիճում ժամի 11 և 33 րօպէին։ Պատգամաւորները նստեցին աթոռների վրայ, կուսակցութիւնները խառն ի խուռն։ Տեղը նեղ, խեղդուկ։ Առաջին հերթում դրված է բաժանմունքների զեկուցումը, երկրորդը՝ մինիստրների խորհրդի նախագահի յայտարարութիւնը, երրորդը՝ ընթացիկ գործերը։ Դահլիճի միջից լսվում են ձայներ՝ ոչինչ չէ լսվում։ Նախագահը յիշեցնում է, որ նիստը տեղի է ունենում անբարենպաստ պայմաններում։

Չերնօսվիտօվը սահմանադրական ռամկավարների անունից առաջարկում է. ի նկատի ունենալով, որ անհնարին է նիստը շարունակել, ընդհատել նիստը և մասնաժողով ընտրել քննութիւն կատարելու համար (կատաստրօֆայի պատճառները պարզելու)։ Արտակարգ յայտարարութիւն է անում, որովհետև չէ կարելի երաշխաւորել, որ կատաստրօֆան կրկնվելու չէ, ուստի ընտրել մասնաժողով և ընդհատել նիստը։

Դոլժենկօվը բարձրանալով աթոռի վրայ, ասում է. «Դումայի շինութիւնը պէտք է դրվի մեր Դումայի վարչութեան իրաւասութեան ներքոյ։ Անցեալ տարի ընտրված էր մի մասնաժողով, որը պէտք է ընդունէր շէնքը կառավարչական ճարտարապետական մասնաժողովից։ Այն ժամանակ,—ես ինքս թէ Դումայում անդամ էի և թէ մասնաժողովի—կառավարչական մասնաժողովը մեզանից չէր թաքցնում, որ նիստերի դահլիճի առաստաղը յուսալի չէ, որ երկրորդ յարկում այն շէնքի առաստաղը, որտեղ այժմ աշխատաւոր խմբակն է հաւաքվում, նոյնպէս յուսալի չէ և կարող է թափվել. մենք անցեալ տարի հաւաքված էինք այդ նոյն շինութեան մէջ մեր սովորական նիստերին մեծ զգուշութեամբ. 80—100 հոգուց աւելի չէր թոյլատրվում դահլիճը մտնել: Այդպիսով շինարարական մասնաժողովին յայտնի էր, որ նիստերի դահլիճի և միւս շէնքերի առաստաղները յուսալի չէին: Տաւրիկեան պալատի շինութեան համար անցեալ տարի յատկացվեց մեծ գումար, եթէ չեմ սխալվում 600,000 րուբլի: Յայտնի է, որ այդ գումարը չը բաւականացրեց և դրա վրա աւելացրեցին էլի 110,000 րուբլի, բայց շինարարական մասնաժողովը, որ տեղեակ էր իրերի դրութեանը և շինութեան կենտրոնական մասի առաստաղի որպիսութեանը, հարկաւոր ուշադրութիւն չը դարձրեց դրա վրա: Շատ կարելի է, այսօր նրանք արել են այդ որոշ դիտումներով—ես չը գիտեմ, յամենայն դէպս այդ դիտումները դաժան են: Պատահելու լինէր այդ նիստի ժամանակ, Դումայի կէսը… (աղմուկ): Ես ներողութիւն եմ խնդրում, պարոններ, եթէ մի փոքր հեռուն գնացի: Ասում եմ, ի նկատի առնելով, որ Դումայի շէնքը պէտք է ենթարկվի Դումայի իրաւասութեանը, մենք իրաւունք ունենք պահանջելու, որպէսզի առաստաղ շինելու գործի քննութեան ժամանակ անպատճառ մասնակցէին Դումայի կողմից նշանակված էքսպերտները: Բացի փլվելու պատճառները քննելուց, պատգամաւորները պէտք է և անձամբ հսկեն Դումայի ամբողջ շէնքը կարգի բերելու գործին: Որպէսզի մեր կեանքը ապահովված լինի, թող պրեզիդիումը յայտնի պալատի մինիստրին, որ անհրաժեշտ է մեր մասնակցութիւնը շէնքի վերաշինութեան գործում նոյնպէս և փլվելու պատճառների քննութեան մէջ: Ներկայ նիստը պէտք է ընդհատվի:

Կապուստին.—Այսպիսի պայմաններում Դումայի զբաղմունքները շարունակել անկարելի է: Միանում եմ կադետների առաջարկութեանը՝ ընդհատելու Դումայի զբաղմունքները և խնդրել պրեզիդիումին Դումայի անդամների այն ներկայացուցիչների հետ միասին, որոնք տեխնիկական գիտութիւն ունեն, քննել այդ անցքը և միջոցներ ձեռք առնել, որպէսզի Դուման կարող լինէր ապահով կերպով հաւաքվել մի ուրիշ տեղ: Երկարատև ծափահարութիւններ:

Իվաշչենկօ.—Հարկաւոր է շնորհակալութիւն յայտնել պրեզիդիումին: Նա հասկացաւ, որ անհրաժեշտ է շարունակել մեր զբաղմունքները, հաւաքելով մեզ այստեղ, այս սենեակում: Պետրի կասակն է՝ ժամանակի կորուստը մահվան է նման, առաջարկում եմ շարունակել նիստը:

Ալեքսինսկի.—Երբ ես եկայ այստեղ, ամենևին չը զարմացայ, որ փուլ եկաւ այն դահլիճի առաստաղը, ուր նստում են ժողովրդական ներկայացուցիչները: Առաստաղները ամենից աւելի ամուր են ներքին գործերի մինիստրութեան մէջ և ոստիկանական դեպարտամենտում:

Աջակողմեանները աղմուկ են բարձրացնում. «դուրս, կորչիր»: Ծափահարութիւններ: Նախագահը խնդրում է կարգը չը խանգարել և քննել նիստը շարունակելու հարցը:

Ալեքսինսկի.—Առաջարկում եմ որոնել ամենամօտ, ամենայուսալի շէնքը Պետերբուրգում, թէկուզ այդ լինէր ոստիկանական դեպարտամենտի, քաղաքային դումայի, և այլն, այդ տեսակ շէնքերը և այնտեղ վերսկսել անմիջապէս զբաղմունքները: Ժողովուրդը սպասում է թէ ինչ պիտի ասեն իր ներկայացուցիչները: Եթէ ժողովուրդը իմանայ, որ մեր վրա առաստաղներ են թափվում, նա կարող կը լինի դրանից համապատասխան եզրակացութիւններ անել:

Կրուպենսկի.—Երբ կան մարդիկ, որոնք չեն կարողանում լսել վիճաբանութիւնները, նիստը շարունակվել չէ կարող: Ես չեմ ցանկանում հասկանալ այն կեղտոտ ինսինուացիաները, որոնք անտեղ կերպով ուղղվում են ինչ որ մարդկանց վրա: (Աղմուկ: Նախագահը զանգահարում է): Անշուշտ մենք կը գտնենք դահլիճ, որտեղից մեզ կը լսէ ռուսաց ժողովուրդը: Այնտեղ մենք ակնարկներ չենք անի, այլ կը զբաղվենք: (Աղմուկ: Ծափահարութիւններ աջակողմում):

Շուլգին, Բոգդանովիչ և Բուլատ համառօտ ճառերից յետոյ, նախագահը յայտնում է, որ նա առաջարկութիւն է ստացել դադրեցնել վիճաբանութիւնները և այդ հարցը քուէարկութեան ենթարկել: Դուման, միաձայն, բացի Իվաշչենկօյից, որոշում է վերջ տալ վիճաբանութիւններին: Նախագահը քուէարկութեան է դնում նախ՝ Դումայի նիստը յետաձգել, որը ընդունվում է համարեա միաձայն, երկրորդ. պրեզիդիումին յանձնարարել Դումայի նիստերի համար տեղ որոնելու բոլոր հոգսերը, և երրորդ՝ մասնաժողով նշանակել քննութիւն կատարելու համար, որը ընդունվում է միաձայն: Նիստը փակվում է ժամի 12 և 15 րոպէին: Նիստին ներկայ են եղել Ստոլիպինը, Շվանեբախը, Կաուֆմանը Շչեգլովիտովը, Շաուֆուսը և Իզվոլսկին: Նիստը վերջանալուց յետոյ, Ստոլիպինը և Գոլովինը առանձնացան խորհրդակցելու: Մաղթանք տեղի չունեցաւ:

Տաւրիկեան պալատի եկեղեցում գոհաբանական մաղթանք կատարելով վտանգից ազատվելու համար, չափաւորների և աջակողմեանների միացեալ խումբը արտակարգ նիստ գումարեց: Ճառախօսները վրդովվում էին կադետ Դոլժենկովի և սոց.-դեմօկրատ Ալեքսինսկու ինսինուացիաներով, որոնք իրանց այսօրվայ ճառերի մէջ Դումայի նիստում հնարաւոր էին համարում, որ փուլ գալը դիտութեամբ լինի արված, զայրանում էին երկրում տերրորիստական ակտերը բազմանալու պատճառով և երկիւղ յայտնում, որ, չը նայելով չափաւորների բոլոր ջանքերին, անկարելի լինի Դուման աշխատանքների ընդունակ դարձնել և ժողովրդի կարիքներին բաւարարութիւն տալ: Խորհրդակցութիւնը խնդրեց գիւղացի-պատգամաւորներին բացատրել իրանց ձախակողմեան ընկերներին, որ հարկաւոր է կարգը վերահաստատել Դումայում և չը գնալ ռումբ նետողների և խռովարարների յետևից, ապա թէ ոչ Դումային սպառնում է դառնալ յեղափոխական ամբիոն, որը կառավարութիւնը և չափաւորները թոյլատրել չեն կարող: Ժողովը որոշեց հարցապնդում անել կառավարութեանը տերրորիստական ակտերի և համալսարանում պատահած անկարգութիւնների մասին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մարտի: Պետական Դումայի որոշումը ի կատար ածելու համար պրեզիդիումը նշանակել է երեք մասնաժողով. առաջինը պէտք է քննէ կատաստրոֆի պատճառները, երկրորդը՝ Դումայի շէնքի փլած մասերն է վերանորոգելու, իսկ երրորդը՝ հարկաւոր դէպքում Դումայի նիստերի համար յարմար շինութիւն պէտք է որոնէ: Առաջինը արդէն հաստատեց, որ փուլ գալու մէջ ոչ մի յանցաւոր նպատակ չէ եղել, երկրորդը, հակառակ ճարտարապետ Բրոնիի կարծիքին, որ Դումայի պրեզիդիումի ցերեկվայ նիստում մինիստրների խորհրդի նախագահի և պետական քարտուղարի ներկայութեամբ յայտնեց, թէ մարտի 7-ին շինութեան վերանորոգութիւնը վերջացած կը լինի, կարծում է, որ բացի առաստաղի փլուածքը վերանորոգելուց, անհրաժեշտ է կատաստրոֆաներից խուսափելու համար ամրացնել Եկատերինեան դահլիճի, թէյի բուֆետի և միւս սենեակների առաստաղները, որը պահանջում է առնուազը երկու երեք շաբաթ: Երրորդ մասնաժողովը մտադիր է մարտի 3-ին դիտել Միխայլովսկի և Մարիինսկի թատրոնները, ազնուականների ժողովարանը, Ժողովրդական Տունը:

Արդարադատութեան մինիստրը, Իոսիֆ Հեսսենի հետ կուլուարներում զրուցելիս՝ ի միջի այլոց յոյս է յայտնել, որ երկրորդ Պետական Դուման երկար ժամանակ կաշխատէ և կիրագործէ երկրի կողմից սպասվող օրինագծերը: Մինիստրի կարծիքով, առաջին հերթում պէտք է դրված լինի տեղական դատարանների բարենորոգումների օրինագիծը, որոնք կը լինեն գրաւական ազգաբնակութեան իրաւական նորմալ յարաբերութիւններ սահմանելու: Անմիջապէս այդ օրինագիծը Դումայի կողմից ընդունվելուց յետոյ, մինիստրը խոստացել է և ժամանակաւոր կանոններ ներկայացնել նոր օրէնքներ մտցնելու և գործադրելու մասին:

Կադետների պարլամենտական ֆրակցիան որոշել է մինչև Դումայի նիստի սկսվելը զբաղվել օրինագծերի պատրաստական աշխատանքներով: Նշանակված են բիւջետային, բանւորական հարցի, օրէնսդրական, ագրարական մասնաժողովների նիստերը, նոյնպէս և գիւղացիական, որի նպատակն է պարզել ոչ միայն հողային խնդիրը, այլև առհասարակ գիւղացու կարիքները և մշակել համապատասխան օրինագծեր:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 մարտի: Պետական Դումայի Տաւրիկեան պալատը դիտող մասնաժողովը փլուածքի առիթով եկաւ նոյն եզրակացութեան, ինչ որ կառավարութեան էքսպերտներն էին յայտնել. միևնոյն ժամանակ գտաւ որ Պետական Դումայի նիստերի համար վտանգաւոր են ընդհանրապէս Տաւրիկեան ապարանքի շինութիւնները և մանաւորապէս Եկատերինեան դահլիճը: Դումայի կողմից ընտրված քննիչ մասնաժողովը յանձնարարել է իր ենթամասնաժողովին կանչելու հարցաքննել այն անձանց, որոնք յայտնել էին առաստաղների վտանգաւոր լինելու մասին և Տաւրիկեան ապարանքի կառավարիչներին: Պարզելու համար թէ որքան ապահով է շէնքը, որոշեց պահանջել 1895 թւականից սկսած մինչև այժմ կատարված բոլոր վերանորոգութիւնների հաշիւը:

Դումայի նիստերի համար յարմար շէնք որոնող մասնաժողովը իր ընտրութեան մէջ կանգ է առել Ժողովրդական Տան վրա և դրա համար որոշել է խնդրել Դումայի Նախագահին բանակցութիւն սկսել Ժողովրդական Տունը ժամանակաւորապէս վարձելու համար: Համաձայնութեան դէպքում առաջիկայ նիստը կը նշանակվի մարտի 7-ին կամ 8 ին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 մարտի: Սահմանադրական ռամկավարների ագրարական մասնաժողովի բիւրօյի նիստում Կուտլերի նախագահութեամբ քննել են ագրարական օրինագծերի հիմնական կէտերը Դումային առաջարկելու համար: Իր ձևով նրանք նման են նախկին Դումայի 42 անդամների առաջարկին, բայց բովանդակութեամբ տարբերվում են նրանից, որովհետև վերջինս յարմարեցված է տեղական զանազան պայմաններին:

Մարտի 3-ին Դումայի տեղեկատու բիւրօյի նիստում, օպպօզիցիօն կուսակցութիւնների բոլոր պարլամենտական ֆրակցիաների մասնակցութեամբ ընդունված են հետևեալ պարտադիր որոշումները. նախ՝ սկսել Պետական Դումայի նիստերը ժամանակաւոր շինութեան մէջ, երկրորդ՝ պահպանել նախկին որոշումը պրեմիէրի յայտարարութեան վերաբերմամբ, այն է՝ ժողովրդական սոցիալիստները և սոց.-դեմօկրատները կը սկսեն քննադատել դեկլարացիան, իսկ միւս կուսակցութիւնները լռութիւն կը պահպանեն: Հերթական գործերին անցնելու հարցը դեռ ևս չէ լուծված:

Սահմանադիր-ռամկավարների պարլամենտական ֆրակցիայի գիւղացիական իրաւունքների հաւասարութեան համար կազմված մասնաժողովը՝ էքս-դեպուտատ Ֆօն Ռուտցենի նախագահութեամբ՝ որոշել է իր կազմի մէջ, ֆրակցիայի և կենտրոնական կոմիտեի անդամներից բացի, հրաւիրել կողմնակի այդ գործին լաւատեղեակ, հմուտ մարդկանց: Մասնաժողովի իրաւասութիւնն է մշակել նիւթեր և ճանապարհը բանալ գիւղացիական իրաւունքների հաւասարութեան և ինքնավարութիւնների ու դատարանների կազմակերպութեան վերաբերեալ հարցերը լուծելու համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 մարտի: Ֆինանսների մինիստրը հաղորդել է Դումայի նախագահ Գոլովինին, որ Ժողովրդական Տունը ժամանակաւորապէս Դումայի նիստերի համար վերցնելու հարցում ինքը ոչ մի արգելք չէ տեսնում, բայց հարցի լուծումը կախված է Ժողովրդական Ժուժկալութեան խնամատար հոգաբարձութեան նախագահ պրինց Օլդենբուրգսկուց:

(Նամակ Պետերբուրգից)

Պետական Դումայի երրորդ նիստը շարունակութիւն էր երկրորդի:

Այն հարցի վերաբերեալ, թէ քանի հոգի ընտրվեն քարտուղարի օգնական, առաջ եկաւ տաք վիճաբանութիւն. այսպէս, օրինակ, ձախակողմեանների առաջարկութիւնն էր ընտրել 5 հոգի, իսկ աջակողմեանները առաջարկում էին, որ բոլոր այն կուսակցութիւնները կամ ֆրակցիաները, որոնք Դումայում այժմ ներկայանում են ունենան ներկայացուցիչներ քարտուղարութեան մէջ:

Ի միջի այլոց սոցիալ-դեմոկրատների կողմից խօսում էր Ալեքսինսկին, իսկ աջակողմեանների կողմից Պուրիշկևիչը: Վերջապէս Դուման համաձայնվելով այն առարկութեան, որ քարտուղարի օգնականները ընտրվում են գործ կատարելու, այլ ոչ թէ հանդիսանալու յայտնի ֆրակցիայի ներկայացուցիչը, որը միշտ տեղեակ լինի թէ պրեզիդիումում ինչ է կատարվում (Պուրիշկևիչի առաջարկը) վճռեց 5 հոգի ունենալ քարտուղարի օգնական և քուէարկութեամբ անցաւ ձախակողմեանների ցուցակը:

Կարաուլով—տրուդովիկ 356 ձայնով, Ուսպենսկի—սոցիալ-յեղափոխական 355 ձայ., Մազուրենկօ—մուսուլմ. ֆրակցիայից 359 ձայ., Խարլամով—կազակ-կադետ 360 ձայ., Մալցևով—սոցիալ-դեմոկրատ 317 ձայ.:

Դրանից յետոյ պիտի դիմէին մի քանի հարցերի քննութեան, ի միջի այլոց պատգամաւորների լիազօրութիւնների ստուգելը: Վճռվեց ընտրել կոմիսիաներ, այսինքն բաժանվել զանազան մասերի և այդտեղ միասին քննել բոլոր դօկումենտները և դրանց արդիւնքը յայտնել Դումային: Ընտրվեցին մի քանի պատգամաւորներ, որոնք վիճակով դասաւորեցին, թէ որ մասում ինչ պատգամաւոր կը լինի: Պարզվեց, որ Ալեքսինսկին և Կրուշեվանը միասին մի մասնաժողովում պիտի գործեն և մի շարք այդպիսի զուգադիպութիւններ: Դա ունի իր նշանակութիւնը, թէ այն տեսակէտից, որ սոցիալ-դեմոկրատը պիտի Պուրիշկևիչի հետ գործէ, և առաւել, որ դրանք միասին պիտի քննեն Կրուշեվանի լիազօրութիւնը: Ինչպէս յայտնի է, Կրուշեվանը Բեսարաբիայից է ընտրված անկանոն, և երբ բողոքել են, որ նրան ձայն են տուել մօտ 1000 հոգի, որոնք վաղուց է որ մեռած են, այդ բողոքը թողնվել է առանց հետևանքի և յոյս կայ, որ հետևեալ նիստին նրան կառաջարկէ Դուման այլ ևս չը յաճախել նիստերը:

Այդպիսով հետևեալ նիստը ներկայացնում է առանձին հետաքրքրութիւն:

Հետևեալ հարցը, որը առաջարկեց նախագահ Գոլովին, այդ այն էր, որ առ այժմ հաստատել այն նակազը, որով անցեալ Դուման առաջնորդվում էր: Դուման ձայների մեծամասնութեամբ հաստատեց այդ առաջարկութիւնը:

Դրանից յետոյ առաջարկութիւն եղաւ, սկսել նիստերը ընդհանրապէս առաւօտեայ ժամը 9-ին, առարկելով, որ դա կը լինի իբրև «օրինակ ամբողջ Ռուսաստանի համար, պարապմունքները սկսել վաղ, Դումայից օրինակ վերցնելով.»

Նախագահը յայտնեց, որ համաձայն նակազի, այդ հարցը կը վճռվի պրեզիդիումում և կը յայտնվի Դումային: Համաձայն նակազին՝ հետևեալ նիստը կը լինի այն ժամանակ, երբ կը քննվեն բոլոր լիազօրութիւնները—ուրեմն մօտաւորապէս չորեքշաբթի կամ հինգշաբթի օրը: Իսկ կոմիսիաները կը հաւաքվեն երկուշաբթի օրվանից:

Սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի ասպարեզ գալու մասին կը գրեմ հետևեալ անգամ:

Արսէն Քալանթար

ԼՈՒՐԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՄԱՍԻՆ

Կուլուարներում խօսում են, որ իբր թէ մօտ օրերս Պետական Դումա է այցելել Շիպովը, որ տոմսակ է ունեցել հասարակութեանը յատկացրած տեղում կանգնելու համար միայն: Դումայի նախագահի թոյլտւութեամբ, Շիպովը իջել է ներքև և մի առժամանակ զրուցել նրա հետ: Միևնոյն օրը հսկողութեան գլխաւորը նկատողութիւն է ստացել մինիստրների խորհրդի նախագահից: Գոլովինը հաղորդել է Ստոլիպինին, որ Շիպովը ներքև է իջել նախագահի—իր թոյլտւութեամբ: Ստոլիպինը պատասխանել է, որ այդ իրան չէ վերաբերում և որ եթէ այդպիսի դէպք նորից կրկնվելու լինի, հսկողութեան գլխաւորը կարձակվի պաշտօնից: («Новь»)

—Պրեմիէր—մինիստր Ստոլիպինը իր մօտ է հրաւիրել Դումայի նախագահ Գոլովինին, ինչպէս ասում են, Դ. Ն. Շիպովի Դումայի կուլուարները այցելելու դէպքի առիթով: Հսկողութեան գլխաւորը արձակված է: («Род. Зем.»)

—Ստոլիպինի և Գոլովինի մէջ, ինչպէս մենք լսել ենք, բանակցութիւններ են տեղի ունենում պարզելու թէ ով է իսկապէս Պետական Դումայի շինութեան տնօրէնը. բոլորովին անկարելի է ունենալ երեք տնօրէն ի դէմս Դումայի նախագահի, պրեմիէր-մինիստրի և հսկողութեան պետի: («Род. Земля»)

—Պետական Դումայի նախագահ Գոլովինը յայտնել է կադետների կենտրոնական կոմիտեին, որ Պետական Դումայի Նախագահ ընտրվելու պատճառով նա հեռանում է կուսակցութեան կազմից: («Новь»)

—Փետրվարի 26 ին ժուռնալիստները գնալով Դումա, հանդիպում են մի նոր սիւրպրիզի: Տաւրիկեան պալատի հսկողութեան պետ բարոն Օստեն-Սակէնի կարգադրութեամբ, նրանց թոյլատրվում է այսուհետև մտնել միայն մամուլի բիւրօյի սենեակը: Կուլուարներն ու բուֆետը նրանց առաջ ինչ ինչ պատճառներով փակվում են, որը զրկում է նրանց հնարաւորութիւնից որևէ տեղեկութիւն իմանալ բաժանմունքների աշխատանքների մասին և յարաբերութիւն ունենալ պատգամաւորների հետ: («Бирж. Вѣд.»)

—Միանգամայն արժանահաւատ աղբիւրներից հաղորդում են, որ Պետական Դուման արձակելու հարցը նախորոշված է անդառնալի կերպով: Դուման արձակելու ուկազը հրատարակվելու է մօտ օրերս, ինչպէս ենթադրում են, ոչ ուշ քան մինչև մարտի 1-ը: Այդ վճիռը այնքան որոշ է, որ կիրագործվի նոյն իսկ այն դէպքում, եթէ Դուման ինքը իր կողմից դրա համար ոչ մի անմիջական առիթ տալու էլ չը լինի: («Новь»)

—Փետրվարի 24-ին, ցերեկվայ ժամի 3-ին, Պետական Դումայի շինութեան այն սենեակում, որտեղ աշխատում է սոցիալիստ-յեղափոխականների պարլամենտական ֆրակցիան, պալատական հսկողութեան պետի օգնականը՝ երկու ստորին ծառայողների ուղեկցութեամբ՝ խուզարկութիւն է կատարել: Քրքրել են սեղանների բոլոր արկղները. որևէ դատապարտելի բան չէ գտնվել: («Новь»)

ՄԱՄՈՒԼ

Վառնայում հրատարակվող «Շարժում» լրագիրը խօսելով Կովկասում Դաշնակցութեան շարքերում սկսված պառակտման մասին, որտեղ որպէս թէ դժգոհ ֆրակցիան նպատակ է դրել կազմակերպութիւնը ազատել բիւրօկրատների ձեռքից և տալ նրան ներկայ պահանջներին յարմար ուղղութիւն, իր կողմից հաղորդում է.

Ստոյգ աղբիւրներից տեղեկանում ենք որ Անդրանիկը ուր որ դաշնակցականների է պատահում, անկեղծօրէն դատափետում է կազմակերպութեան թերութիւնները և մատնանշում նրա ձեռնտուութեան բացակայութիւնը երկրի յեղափոխական գործերին: Անդրանիկի կարծիքն և համոզումն է գործի ղեկը խլել բիւրօյականներից, սիրողներից և կենտրոնացնել յեղափոխական զինւորականութեան ձեռքում. այսինքն երկրում գործողների: Յաջողութիւն ենք ցանկանում Անդրանիկին և զինւորական խորհրդին իրենց ծրագիրների մէջ:

*

«Հովիւ» շաբաթաթերթի արտայայտած նըրբատեսուր կարծիքը «Մշակ» լրագրի վերաբերմամբ, առիթ է տալիս «Ժամանակ»-ի տխրահռչակ լարախաղացներին իրանց բոլոր ույժն ու հմտութիւնը երևան հանելու:

Ամեն մի նպաստաւոր կարծիք «Մշակ»-ի մասին, առհասարակ, ժամանակականների աչքում փուշ է դարձել, իսկ այժմ նրանց լօգիկայով «Հովիւ»-ի այդ կարծիքը փայլուն ապացոյց է, որ «Մշակը» կատարեալ անկման ու ամբողջովին յետադիմութեան դիրքն է ընկել:

«Որովհետև ինչպէս ասում են, միայն նմաններն իրար սիրում և հասկանում են»:

Ահա թէ ինչպիսի «ակսիօմաների» վրա են ուզում խաղալ մեր ժամանակական լարախաղացները, այդ «ծայրայեղ առաջադիմականները», որոնց առաջադիմական մաշտաբը պատրիօտներից ընդօրինակած լինելու մասին ոչ մի կասկած չէ կարող լինել:

Մի՞թէ շատ ժամանակ է անցել այն օրից, երբ նոյն «Ժամանակն» ու «Голосъ Кавказа» ռուս պատրիօտների օրգանը իրար հետ սերտ համերաշխութիւն ու սրտաշարժ զուգադիպութիւն ցոյց տուեցին նուրբ ըմբռնողութեան ու հոգեկան դրդումների մէջ:

Կարելի է այդքան շուտ մոռանալ, որ դեռ մի քանի օր առաջ մեծ պաթօսով ձգտում էին «Ժամանակ»-ի էջերում հաւատացնել, որ մտքի ու համոզմունքների «զարգացումը» յատուկ չէ դաշնակցական դարձած նորընտիր պատգամաւորներին:

Մենաշնորհը միայն ժամանակականները պէտք է վայելեն:

Թողէք հանգիստ հանգուցեալ Արծրունուն. ինչ կայ ձեր և նրա մէջ: Չէ՞ որ դուք, հայկական «սոցիալիստ-յեղափոխականներդ» նրա անուան հմայքին դիմում էք այն ժամանակ միայն, երբ հարկաւոր է ձեր ժանգոտ ապրանքի արժէքը բարձրացնելու համար. և այդ անում էք առանց քաշվելու, «թէև նա մի սոսկ լիբերալ էր միայն»:

Չը գիտենք դեռ պատիւ կը համարէ՞ր նա ունենալ ձեզ նման աշակերտներ, որոնց խղճի վրա արեան բծեր ու խայտառակ բռնութիւններ են ծանրացած: Արդեօք այդպիսի մի առաջադիմութեան համար չէ՞ր այնքան եռանդով ծափահարում ձեզ Թիֆլիսի ռուս պատրիօտների օրգանը սրանից մի քանի ամիս առաջ:

Ուրեմն կարող ենք շնորհաւորել ձեզ այդ «գովաբանութիւնների ու ներբողների» համար, որովհետև «նմաններն են միայն սիրում» ձեզ:

Դրա համար մեզնից երես դարձնէ «Մշակի» հիմնադիրը, թէ իր հիմնած թերթի ու թղթակից-աշխատակիցների դէմ սկսված ստոր արշաւանքի համար:

Աւելի լաւ չէ՞ գործ ունենալ համեստ ու մաքուր կոնսերվատորների հետ, քան ժողովրդի շէնքին կոշմարի նման նստած հրէշաւոր «ազատամիտների» հետ:

Եւ ինչ անուն կարելի է տալ այն բռնութիւններին, որոնցով զսպվում է ժողովրդական ազատ կամքը, կարծիքը, ձայնը, ահաբեկվում են այդ գործելակերպի դէմ բողոքող տարրերը…

Արդ ո՞ր կողմն է անկումը, անբուժելի կոյրեր:

*

Թէ կառավարութեան և թէ նրա արբանեակ—աջակողմեանների ամբողջ յոյսը՝ Դումայի օպպօզիցիօն բանակի մէջ պառակտում սերմանելու համար՝ ի դերև անցաւ: Ծայրայեղ ձախակողմեանները այնքան հեռատես գտնվեցին, այնքան տակտ ունեցան, որ չափաւորեցին, զսպեցին իրանց յափշտակութիւնը և օպպօզիցիային հնարաւորութիւն տուին համերաշխ գործելակերպ ընտրելու: Իհարկէ, այդ հանգամանքը չէր կարող դուր գալ բիւրօկրատիայի սպասաւորներին և նրանք իրանց բոլոր հարուածները ուղղեցին դարձեալ կադետների դէմ, որովհետև նրանք են համերաշխութեան գլխաւոր հեղինակները և օպպօզիցիայի ուղղութիւն տուողը:

Կադետները,—ասում է «Россія» կիսապաշտօնական օրգանը,—բոլոր ույժերով աշխատում են գտնել այն միջոցը, որի շնորհիւ կարողանան թաքցնել նրանց, որոնք իրանցից ձախակողմում են կանգնած, և ստիպեն այս վերջիններին հլու կերպով, քայլ առ քայլ դուրս քաշել կադետական սայլը տղմի միջից, որտեղ նա խրված է և խրված է բաւականին հիմնաւոր կերպով: Սայլը անշուշտ բեռնաւորված է բացառապէս կադետական իրեղէններով, բայց որպէսզի այդ ճակատ անյարմարութիւնը շատ էլ պարզ կերպով աչքի չընկնի, կադետական բոլոր քօղարկել են մուգ կարմիր բրեզենտով, իսկ պ. պ. Կուտլերը, Հեսսենները, Ծոլենկօն և ուրիշները, որոնք չարչարվում են կադետական այդ խրված կառքի վրա, զուգված են մուգ-կարմիր վերարկուներով: Ձախակողմեանները գնում են դէպի կարմիր իրերը, իսկ կադետների համար կարմիր ներկի խնայողութիւն չը կայ: Ամեն անգամ հենց որ կասկածով են նայում ձախակողմեանները, կադետները բռնկվում և իրանց վերարկուների վրա թափում են ամբողջ վեդրոներով աչքի ընկնող կարմիր ներկեր: Բայց երբ տեսնում են, որ ձախակողմեանները դրանով էլ չեն խաբվում, յամառվում են, նրանք արդէն սպառնական դիրք են բռնում և սպառնում. «Պարոններ, ուշքի եկէք. մենք չէ որ կարող ենք հեշտութեամբ ներկվել և մոխրագոյն, ինչպէս որ մոխրագոյնից դարձանք կարմրագոյն»:

Դժուար չէ հասկանալ, որ այդ մանեօվրն էլ նոյն նպատակով է կատարվում—պառակտել օպպօզիցիան: Բայց արդէն ուշ է. այդ մանեօվրը ամենքի համար էլ հասկանալի է. թակարդից ամենքը զգուշանում են:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Գոմաձոր, 25 փետրվարի: Նոր-Բայազէտի գաւառի Գոմաձոր գիւղը, որը ունի 80 տուն բնակիչ, ապրելով ծանր պայմաններում, ոչ մի խօսք չի արտաբերում իր ծանր դրութեան մասին: Հողի այն չնչին քանակութիւնը, որը մուլքադարական է և պատկանում է Սևանայ վանքին, հետզհետէ կորցնելով իր պտղաբերական յատկութիւնները, ամայանում է և այդպիսով սովի ճանապարհն է բացում խեղճ գիւղացիներին, որոնք պտղաբեր տարիներին, նոյն իսկ, դեռ գարունը չը բացված, ստիպված են լինում հաց առնելով քաշ գալ մինչև հունձը և կալը: Մուլքադարական է նաև հարևան գիւղի Ցամաքաբերդի հողը: Այս երկու գիւղը, ամբողջապէս ունենալով 1863 դես. հող, որից իւրաքանչիւր բնակչին ընկնում է $1^1/_3$ դես., հողի ստացած աճուրգից տասնորդ է վճարում Սևանայ վանքին, ինչպէս «բահրա»: Այդ հողի չնչին քանակութեան մէջ պարունակվում է անմշակ լեռներ, քարքարոտներ, ձորերի ահագին տարածութիւն, որը անպէտք է նոյն իսկ արօտատեղ ծառայելու համար: Մնացած պէտքական հողի ամենաընտիր մասերը անպատ են դարձել շնորհիւ գարնանային հեղեղների, որոնք ուժգին արագութեամբ իջնելով բարձր սարերից, ողողում են պտղաբեր հողը: Պէտքական հողի մեծամասնութիւնը գտնվելով Սևանայ ծովի ափերից բարձրացած սարերի լանջերի վրա, վերին աստիճան դժուարութեամբ են վարվում և մշակվում: Շատ հողեր, գիւղացիների ասելով, մի թէի են վարվում:

Չը նայած այդպիսի դժուարութիւններին, գիւղացիք համբերութեամբ և աշխատասիրութեամբ մշակում են անմշակ հողերը, բայց այստեղի բնութիւնն էլ մի կողմից է արգելք հանդիսանում հողագործներին: Զառիվայրերի վրայի հողի բաղադրիչ նիւթը, ինչպէս յիշեցի, ողողվում է հեղեղներով, որոնք լուանալով հողը, թողնում են միայն քարերը և աւազը, որի մէջ արդէն հացը պտուղ չէ տալիս, և այդ հողից դուրս եկած արդիւնքը չէ ծածկում իր վրա դրված աշխատանքը և ծախքերը՝ «овчинка выдѣлки не стоитъ»: Բացի դրանից, հեղեղները իջնելով սարերից, ջրի հետ վաղեցնում են քարափների ահագին կտորներ և դրանով ծածկում են ամենաբերրի վարելահողերը և այդ բոլորի հետևանքը լինում է այն, որ հողը անկարող է դառնում կերակրել գիւղացուն, չը նայած նրա մեծ ջանքերին և աշխատանքներին:

Գարունը բացվում է թէ չէ, գիւղացիք տենդային աշխատութեամբ սկսում են վարել հողը, բայց որովհետև այդ հողը բոլորովին չէ բաւականացնում, ահա և սկսվում է մի՝ ինչպէս ասած՝ земельная лихорадка: Թէ աղքատ և թէ հարուստ վերջին ճիգն են գործ դնում հարևան գիւղացիներից ամենաթանկ գներով հող առնել և սերմանել, յուսալով առատ հունձ ստանալ: Փող ձեռք բերելու նպատակով գիւղացիք կիսագին վաճառում են իրանց հարկաւոր տնտեսութիւնները: Գիւղացիք ուրիշ աղբիւր չունեն, այդ է նրանց կապիտալը, որով մի կերպ կարողանում են հող և սերմացու առնել: Ոմանք հրէշային տոկոսներով փող են պարտք անում: Այս հանգամանքներում կուլակների-միրոյեդների ախորժակը բացվում է, սրա հետ բացվում են նաև թեթևակէս աշխատելու ամենահեշտ միջոցները և նրանք օգուտ քաղելով իրերի դրութիւնից, քամում են աշխատաւոր ժողովրդի հիւթը: Այս է պատճառը, որ գիւղացիների մի դասակարգը յաւիտենականապէս չէ կարողանում ազատվել իր ծանր պարտքերից, որովհետև հրէշային տոկոսները անդամալուծում են խեղճերի տնտեսութիւնը: Տեղացիները մեծ մասամբ հողը գնում են Ելենովկի մալականներից, որոնք բաւականաչափ հող ունեն և հողի կարիք չեն զգում. սրանց հանդը, որը ահագին տարածութիւն ունի, դառնում է земельная лихорадка-ի վայրը, որտեղ ձգտում են Ծաղկաձորի բոլոր սակաւահող բնակիչները, օրինակ գոմաձորցիք, չիչաեցիք, քարվանսարեցիք, շահրիզեցիք, բանդամալցիք և այլն… Ելենովկի մալականները, որոնցից շատերը չը կարողանալով սեփական միջոցներով իրանց հողը մշակել, հենց ապրում են նրանով, որ հողի առուտուր են անում, կամ հողը տալիս են «կիսբար» վարելու և ցանելու: Ելենովկից գրեթէ, իւրաքանչիւր տարի տեղափոխվողներ են լինում ուրիշ երկրներ, օր. Ախչայ, Ասխաբադ, Ամերիկա, Պաղեստին և այդպիսով հասարակութեան հողը աւելանում է:

Գիւղացիների այսպիսի դժուար կացութիւնը մի փոքր թեթևանում է շնորհիւ տեղիս երիտասարդների, որոնք պանդխտելով գործարանական կենտրոնները, կարողանում են մի կերպ նիւթապէս օգնել և տնտեսութիւնը ուժեղացնել: Վերջին ժամանակների քաղաքներում տեղի ունեցող անգործութիւնը, որին ենթարկվում են գիւղի աշխատաւոր ույժերը, մի յուսահատական դրութեան մէջ են պահում գիւղացիներին, որոնք չունենալով ուրիշ կողմնակի աշխատանքներ, տնտեսական ամենամեծ կարիքներ են զգում: Գիւղացիք մեծ յոյսեր են տածում ներկայումս բացված Պ. Դումայի վրա, որը միայն կարող կը լինի թեթևացնել հողի կարօտութիւնը: Այստեղի ծայրայեղ սակաւահողութիւնը մի հասարակական խնդիր է դարձել գիւղացիների համար, և իրօք, տեղիս գիւղացիների բարօրութիւնը կը կայանայ նրանում միայն, երբ նրանք երկրի ազատ վարելահողերից և արօտատեղերից իրանց ձեռքը կը գցեն մի քանի կտորներ: Յուսով ենք, որ այս կարիքը թեթևացնելու համար մեզ կօգնեն ղեկավար շրջանները:

Ս. Աղիլխանեանց

ԳԱԶԱՆ ՄԱՐԴԻԿԸ

(Զիւանշիրի գաւառից)

փետրվարի 5-ին

«Գազան մարդ» անուանում եմ աւազակ, մարդասպան, անբարոյական և առհասարակ մարդկային արժանաւորութիւններից միանգամայն զուրկ անձնաւորութեանը, որի- կային: Այդպիսի մարդկանց թիւը գաւառ եթէ այնքան էլ շատ չէ, պէտք է աւել այնքան էլ քիչ չէ: Ներկայումս դրանցից մեն մէկը մի «ինքնակալ» է համարում բան, ամեն «գետաղ-գիւղի» մարդի տեղ գնում. չի ամաչում ոչ Աստուծուց, ոչ մարդկանցից: Նա մօրակը ձեռքին «պօխօղնիկ ու լաւ «տարօրինակ» հագուստը հագին, հր ղէն ձին տակին, «ափ-աշխարա» լրբութիւններով, անբարոյականութիւններով է պա րապվում… Եւ ո՞վ է կարող նրան արգել հանդիսանալ… Ոչ ոք: Բոլորը վախենում են նրա հետ խօսելուց, որովհետև նա աւազակ տուն քանդող է: Երբ նրա ամենամօտիկ բա րեկամը,—ընկերը բարի խորհուրդներով առաջարկում է թողնել լրբութիւնները, ժամանակ մարդ-գազանը զէնքի է դիմում կամ մօրակի հարուածներով ստիպում է բարի խորհրդատուին փախչել, գան ընկնել, սուգ ու շիւանը գցել… Եւ ինչ ստիպել այդ նախկին խոնարհ, ծածուկ զանին այժմ հրապարակային ու կատա դառնալ:

Ահա թէ ինչը. նրան կատաղեցրել են քանի հարիւրանոց դրամը, հրեղէն ձին, «պօխօղնիկը», «տարօրինակ» անսովոր հագուստ և ձեռքի մօրակը… որոնց նա չէ տես իսպառ իր կեանքի բոլոր ընթացքումը:

Բայց որտեղից են այդ հարիւրները, հր ղէն ձին, «պօխօղնիկը» և այլն, և ո՞վ է դ նրա ձեռքին տխրահռչակ… մօրակը և ինչպիսի ընթացք է ունեցել նա սրանից քանի տարի առաջ: Ահա քեզ այդ բոլո պատասխանը:

Մինչև վերջին թուրք-հայկական ընդհ րումների սկսվելը, այդ մարդ-գազանն պատառոտած հագուստներում, չոր հաց կարօտ, բացի ծածկաբար… աւազակութի ներ անելուց, պարապում էին մասամբ տնային գործերով: Նրանք ծանրաբեռնվ լինելով տնային հոգսերով, անտառներում թէ ուրիշ զանազան տեղերում, այսպէս այնպէս, աշխատելով, ամիսներում իրա տուն, գիւղի երեսը չէին տեսնել: Դրանք ե դեցի, ժողովարան չէին յաճախած, ժողովրդ մէջ ոչ մի բանի համար ձայն չէին տա այլ եղել են հասարակութեան ամենաստոր ու ամենաչնչին մարդիկը: Սակայն Դաշնակ ցութիւնը, տեսնելով կարճամիտ թուրքեր հայերի հետ անպայման ընդհարումների կսելը, չը կարողացաւ կամ ուզեց ժամանակ չունեցաւ ազնիւ յեղափոխական զինւորների թիւը շատացնել, այլ ստիպվա եղաւ դաշնակցութեան զինւորական դրօշակ տակ մտցնել և աւազակ, ազգէս «չաթե քեաստան», կոյրիտ, անձնուէր ու մարդկայի արժանաւորութիւններից միանգամայն զուր գազան մարդկանց, որոնցից շատերը չէի համաձայնվում ծառայել Դաշնակցութեան ամիսը 20 րուբլով, այլ 30 րուբլի էին պ հանջում և որոնք չէին կարողանում արտա սանել «Դաշնակցութիւն», «կուսակցութի և կամ «յեղափոխական» խօսքը:

Տարածվեց, որ այդ գազան մարդիկը Դաշնակցութեան զինւորներ են նշանակված, որովհետև ընդհարումների ժամանակ գաւառ ներում թէ դատաստանական գործը և թ ամեն ինչ Դաշնակցութեան ձեռքին էր, ու տի զինւոր նշանակված գազան մարդիկը, զատ ժամանակները, առանց Դաշնակցութեան նից իրաւունք ստանալու, դատաւորներ, ներ կայացուցիչներ, խմբապետներ յայտարարե ցին իրանց, չը նայած, որ Դաշնակցութիւ ունէր իր դատաւորները, ներկայացուցի ները և այլն, որոնք տեսնելով ինք նակոչ գազան դատաւորների, ներկայա ցուցիչների երևան գալը, վախենալուց է թէ ինչի հրաժարվեցին գործեր քննելու: Ե այդպիսով բոլոր իրաւունքները անցնելո մարդ-գազանների ձանկը, էլ ինչ ասես, ո նրանք չարին. ճնշեցին գիւղացիութեան մօրակի հարուածներով արնաշաղախ արի անմեղներին, այն իրաւարան մասնագէտ դ տաւորները, իրանց հպատակեցնելու համա կեղեքեցին, փափուկ քրթմնջներ վերցրին Եւ խակապէս հանաք բան չէ. սոված-աւազակ հասարակութեան ամենաստորին մարդը յա կարծ մի երկրի տէր դառնայ, ինքնակալ ինքնակալ դառնայ: Բայց ափսոս, որ ժամա նակաւոր խանութիւն էր: Եւ ո՞վ էր կարող ո՞վ կը համարձակվէր յայտնել Դաշնակցու թեանը, որ վերջինիս զինւորը ինքնակո «խան» է հանդիսացել.: Այ «գիդի» անտէ «ճօլքա»:

Բացի դրանից ինքնակոչ խաները ապրե ալան թալանով, փողեր զիզեցին առնուաց հարիւրներով, հրեղէն ձի գնեցին, «պօխօղ նիք» ու տարօրինակ հագուստ կարել տուին ու եղան կատարեալ «ինքնակալներ» բառ բուն իմաստով: Ամեն օր դրանց դատը հա մախմբված էին լինում անթիւ մարդիկ, գան գատաւորներ: Խանը մէկին ծեծում էր, միւ սին բանտարկում, երրորդին տուգանքի են թարկում և այլն, և այլն. ո՞րը գրեմ, ո՞ր թողնեմ: Նրան, այդ մարդ գազանին կամ ակամայ պէտք է ենթարկվէին, հպատակվէ ամեն տեսակ մարդիկ, թէ քահանաներ, թ աստիճանաւորներ…: Միևնոյն մարդ գազա ններն էին, որ վերջ ի վերջոյ, ոչ Դաշնակցու թեանը օգուտ տուին և ոչ հասարակութեան և դեռ բանակցիւների պատճառ դառան, ամ տակ գցեցին կուսակցութեան վարկը…: Այ մարդ գազանների դեռ ինչն է մերկացվել Դեռ շատ բան կայ մերկացնելու, բայց աւե լորդ է գազանների պատճառով թղթեր փչաց նելը: Բաւական են մի քանի մերկացրածները Նրանցից երևում է ամեն ինչ ու բացի այ բոլորին են յայտնի նրանց արած գազանու թիւնները…: Սակայն չենք ուրանում, որ Դաշ նակցութիւնը ունէր և ունի ազնիւ յեղափո խական զինւորներ:

Եւ ուրեմն, մարդ-գազանների կատարա լրբութիւնների մի չնչին մասը «Մշակ» լրագի րը մերկացնելով, ինչու պէտք է այդ յարգել թերթը արատաւորված համարվի, ինչու պէտ է այդ պատուական լրագրի յարգելի ղե կավարները, արատաւորված համարվին Մի թերթ, որ գոյութիւն ունի 35 տարի ունեցել է ու ունի բազմաթիւ յարգողներ մի թերթ որ միակ հայկական թերթն է եղե համարեա ամբողջ Ռուսաստանում ու Պարս կաստանում, դեռ չը հաշւած ուրիշ աէրու թիւնները, չի կարող երբէք արատաւոր ված լինել: Հայ ազգը այնքան էլ ապերախ ու երախտամոռ չէ, որ մոռանայ «Մշակը» նրան արատաւորված համարէ: Այդպէս համարող մի քանի անհատները դուրս չեն ըմբռնել դեռ «Մշակի» դէպի գաղտն-մարդկանց ուղղած յօդուածների բուն միտքը: Ցաւենայն դէպս մենք «մշակականներս» չենք արտատպում որ և իցէ մի թերթ, մանաւանդ «Ժամանակ»-ը, միայն անբաւական ենք կուսակցութեան մի քանի անհատների արարքներից և թող «Ժամանակականներն» էլ չանարգեն մամուլը... Նրա դէմ բօյկօտ հրատարակելով: Փաստ չէ՞, որ «Մշակը» արտատպուած են համարում մի քանի անհատներ միայն նրա համար, որ նա մերկացրել է կատարուած լրբութիւնները մի քանի գաղտն մարդկանց, որոնք մինչև այսօր էլ չեն թողնում ձեռներից մտրակները ու չեն դադարում պարապվելու լրբութիւններով: Դաշնակցութիւնը պատճառ դառաւ այդ քաղցած գաղտնիների հարստանալու ու ժողովրդի գլխին աղաներ դառնալու, ծնելու նրան և դեռ լրբութիւններով պարապվելու... Եւ այդ գաղտն մարդիկն են, որ այսօր էլ չեն սիրում խաղաղութիւնը, նրանք պարապ են, ուզում են նորից խռովութիւն անել, աւելի հարստանալ: Հարկաւոր է դրանց վռնդել հասարակութիւնից, ասպարէզը մաքրելու համար, կուսակցութեան վարկը բարձրացնելու համար, ժողովրդին ազատելու համար: Մինչև երբ պէտք է ժողովուրդը վախենայ գաղտն մարդկանցից ու իր մէջ նրանց պահպանելով, նրանցից վնասներ կրէ: Ժամանակ է նրանց դատի տալու, պատժելու...

Բ. Զ.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Փետրվարի 26-ին

Ղարաբաղի հայոց կօնսիստորիան վաղուց հետէ ներկայացնում էր մի պարսկական խանական քարվանսարայ, որտեղի ծառայողներից և ատենակալներից ամեն մէկը իր պաշտօնի ու իրաւասութեան բարձրութեան չափ պարապում էր կաշառակերութեամբ և հարստահարում կօնսիստորիան: Ամենքն էլ ոսկի էին դիզում ապագայի համար:

1900—1905 թ. շրջանում ամեն բան իր գագաթնակէտին հասաւ: Վերջը հետևանքը այն եղաւ, որ բարձրագոյն հոգևոր իշխանութիւնը, ճանձրացած մի շարք բողոքներից, քննութիւն բաց արեց և նրանց յանցաւոր ճանաչելով մի շարք գործած յանցանքների մէջ, պաշտօնանկ արաւ և յանձնեց մարմնաւոր իշխանութեան դատարանին, իսկ առաջնորդ Գրիգոր եպիսկոպոս Գասնակերեանը թէև վռնդվեց պաշտօնից, բայց բաւական հարստութիւն ձեռք բերելով՝ ճանապարհորդում է Եւրոպայում:

1905 թւից ունենք նոր առաջնորդ, նոր կազմով: Ներկայումս, դարձեալ բացվել է իր տեսակի մէջ նոր մի խոշոր զեղծում:

Գրիգոր եպիսկոպոս Գասնակերեանի առաջնորդութեան օրով ձեռնադրվեց քահանայ ճեմարանաւարտ Աղէքսանդր Թարխանեանցը: Նրան ճանաչող և մերձաւոր ծանօթները նրա մասին այն կարծիքն էին յայտնում, որ նա միայն մի չարիք կը լինի եկեղեցու և ժողովրդի համար: Դրանց յայտնած կարծիքն իրականացած է: Եղիշէ քահանայ Թարխանեանցը, նախկին ուսուցիչներից մէկը, որ առաջ ստանում էր հազիւ 600 ր. ռոճիկ, այսօր, որպէս ռէալական դպրոցի կրօնուսոյց և դաստիարակ, ստանում է 1200 ր. ռոճիկ, որպէս կօնսիստորիայի անդամ 100 ր., որպէս քաղաքի գործակալ 120 ր., որպէս ծխատէր քահանայ 600 ր. վարձատրութիւն, ընդամենը տարին 2020 րուբլի: Այդ գումարի փոխարէն, նա բարիք ոչ մի տեղ ոչ ոքի չէ հասցրել, բացի չարիքից: Նոյն այդ Եղիշէ քահանան ձեռք բերելով պսակի օրհնութեան հրամանի տպագրված բլանկներ, արձակել է մի շարք կեղծ հրամաններ, իսկ փողերը հանգիստ սրտով դրել իր գրպանում:

Ոչ ոք չէր կարող բանալ այդ գաղտնիքը և անհնարին էր բանալ, թէ դէպքը ինքն իրան չը բացվէր: Կօնսիստորիան իր մի հրամանով մի քահանայի անունով, արգելում է կատարել մի պսակ: Քահանան ներկայանում է կօնսիստորիային, ցոյց տալիս մի հրաման, Եղիշէ քահանայի ստորագրութեամբ, որի զօրութեամբ և կատարել է այն պսակը: Կօնսիստորիան իբարանցման մէջ է ընկնում: Հրամանը համեմատում են իսկական մատեանի կոճղների հետ և հրամանը դուրս է եկել կեղծ: Կեղծ հրամանն արձակել է կօնսիստորիայի անդամ՝ գանձապահ Եղիշէ քահանայ Թարխանեանցը: Կօնսիստորիան արձանագրութիւն է կազմում և շրջաբերական հրամանով գործակալներից պահանջում պսակի բոլոր արձակված հրամանները, զննելու, թէ քանիսն են դրանցից իսկական և քանիսը կեղծ և ով է տուել կեղծերը: Առայժմ ժողովված հրամաններից բաւականաչափ դուրս է եկել կեղծ, նոյն Եղիշէ քահանայի ձեռքով արձակված: Հասանելի արդիւնքը խորել է Եղիշէ քահանան, ճեմարանաւարտ, ռէալական դպրոցի կրօնուսոյցը և դաստիարակն, բարոյականութեան ուսուցիչ-քահանան, թեմական դպրոցի հոգաբարձութեան փոխ-նախագահը, Մարխամեան օրիորդաց դպրոցի հոգաբարձութեան նախագահը, Նպաստամատոյց Ցանձնաժողովի փոխ-նախագահը և Ղազանչեցոց եկեղեցու ծխատէր քահանան, քարոզիչը, Տիրոջ պատարագ մատուցանողը: Նա ստանում է տարին կլորիկ 2020 ր. ռոճիկ, սակայն թոյլ է տուել իրան մաքրազարդել ու աթոռահաս արդիւնքները, որի մի մասը հանում է Մայր Աթոռին, մի մասը թեմական դպրոցի աղքատ աշակերտներին, այրի կանանց և որբ երեխաներին: Տեսէք թէ Եղիշէ քահանան, ինչպէս է մեռցրել իր խիղճը և անուշ արել, այսպիսի սով և տառապալից ժամանակում, որպիսի նպատակին հանելիք գումարները: Քննութիւնը շարունակվում է: Ժողովուրդը յուզված է, աշակերտները զզված. եթէ կօնսիստորիայի նախագահը պաշտպան հանդիսանայ և քօղարկէ Եղիշէ քահանայի այդ ծանր արարքը, այն ժամանակ ժողովուրդը ինքը կանէ արդար դատաստան: Եղիշէ քահանան առայժմ մնում է իր պաշտօնում:

***

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Երևան, փետրվարի 27-ին

Ամսիս 15-ին քննվում էր Երևանի Նահանգական դատարանում անցեալ տարվայ մայիսի 23-ի և 24-ի թուրք-հայկական ընդհարումների գործը: Մեղադրվում էին վեց թուրք և երեք հայ: Թուրք մեղադրեալներին պաշտպանում էին Ջալալեանց և Անտօնեանցը, իսկ հայերին պաշտպանում էր պ. Լևոն Մուշեղեանցը:

Մեղադրական թերթի մէջ ասված էր, որ 1903 թւի մայիսի 23-ին, Երևան քաղաքի զանազան մասերում սկսվեցին ընդհարումներ հայերի և թուրքերի մէջ ազգայնական և կրօնական թշնամութեան հողի վրայ: Երկու կողմից էլ հաւաքվում էին խումբ խումբ և հրացաններով, ատրճանակներով յարձակվում էին միմեանց վրա. աւերում էին տներ, խանութներ. պատահում էր, որ և սպանում էին:

Երկու կողմերի վկաներն էլ հրաժարվեցին իրանց սկզբնական ցուցմունքից, որը տուել էին քննչին առարկելով նրանով, որ առաջ տուել են իրանց ցուցմունքները կրքի և բոպէի ազդեցութեան տակ, իսկ այժմ, մոռանալով ամեն մի թշնամութիւն, յայտնում են իսկականը:

Այս գործը մեծ հետաքրքրութիւն էր զարթեցել երկու կողմի հասարակութեան մէջ և չը նայած, որ գործը վերջացաւ գիշերվայ ժամը 11-ին, այնուամենայնիւ դատաստանական դահլիճը և պատշգամբը լիքն էին խուռն հասարակութեամբ, որը անմեղ մեղադրեալների արդարացման վճիռը լսելուց յետոյ, գոհ սրտով և մէկը միւսին շնորհաւորելով ցրվեց իր տները:

Հետաքրքրական էր փաստաբան պ. Լևոն Մուշեղեանցի ճառը այն տեսակէտով, որ նա թուրքական յարաբերութիւնները համեմատեց հրէական ջարդերի և խուլիգանական շարժումների հետ ինտելիգենցիայի վերաբերեալ Ռուսաստանում, չեշտելով, որ այդ բոլոր արիւնալի և տխուր երևոյթները ծնունդ են առնում մի աղբիւրից, մեր հայրենիքի ամեն անկիւնում գոյութիւն ունեցող սև պրօվօկացիայից: Այդ արիւնալի ընդհարումները այս պատմական բոպէում Ռուսաստանում հարկաւոր էին մութ ույժերին իրանց գոյութիւնը պահպանելու համար: Մեզ ասում են թէ թուրք-հայկական ընդհարումները առաջ են եկել կրօնական և ցեղական թշնամութիւնից, բայց ուր էր այդ թշնամութիւնը սրանից երկու տարի առաջ: Ինչու նա յանկարծ բռնկվեց փոթորկի նման և ինչու այժմ արդէն վերջացած է, եթէ դա իսկապէս նոյն թշնամութիւնն է երկու ազգերի մէջ:

Ապացուցանելու համար, որ պ. դատախազի կարծիքը սխալ է, կը բերեմ հետևեալ օրինակը: Հեռու չը գնանք, հէնց մեր սահմանի մօտ կայ մի հին պետութիւն, որի անունն է Պարսկաստան և այնտեղ հայերը այնքան քիչ են որ եթէ պարսիկները ուզենան, մի քանի ժամվայ մէջ դրանց փոշի կը դարձնեն և վերջ կը տան հայի անունը Պարսկաստանում: Բայց մենք այսօր տեսնում ենք դրա հակառակը. այդ քրիստոնեայ ազգութիւնը Պարսկաստանում օգտվում է արտօնեալ դրութիւնով և այստեղի ընդհարումների ժամանակ այնտեղ ոչ մի հայի քիթ սնգած չէ արնոտել...

Դատախազի օգնականը հրաժարվեց մի քանիսին մեղադրելուց, խնդրելով, որ միւսներին տան արժանի պատիժ:

Դատարանը բոլորին արդար ճանաչեց:

Հրանտ-Աղա

ՆՈՒԽՈՒ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Նուխու դպրոցները չարչի հոգաբարձուների կամայականութեան են ենթարկված: Դպրոցից հեռացված են աւագ ուսուցիչ պ. Վ. Տէր-Աբրահամեան և ուսուցիչ պ. Ա. Գիւրջեան, առանց կաթողիկոսի հաւանութիւնը ստանալու, հակառակ կանոնադրութեան: (Տեսուչ յօդ. 13): Մինչև գործի քննութիւնը, Էջմիածինը ևս չուզեց յարգել իր հաստատած կանոնադրութիւնը և նա ևս համաձայնվեց, որ հեռացված ուսուցիչները դուրս մնան առայժմ: Աշակերտութիւնը խիստ գրգռված է, դասադուլներ են անում, 60 հոգի դրանցից դարձեալ դուրս վռնդվեցին հոգաբարձուների հրամանով. դասերը խանգարված են. ուսում չը կայ. հոգաբարձուները ըմբոստ աշակերտներին հանդստացնելու համար աններելի միջոցների են դիմում սպառնալով.—«Այս վրայիդ հագուստը մենք ենք տուել, ճաշդ կորիր», «Դու տանը հաց չունես ուտելու, չես ամաչում որ աղմուկ ես բարձրացնում երկու ուսուցչի համար». «Դու ձրի ես, իրաւունք չունես խօսելու»: Հասարակութիւնը ևս գրգռված է. բոլորը քնից զարթնել են, 5.6 ծխական ժողովներ են տեղի ունեցել և գաղտնի քուէարկութեամբ ընտրվել են 20 մարդ, որ քննեն դպրոցական գործերը: Եւ ինչ էք կարծում. մեր հոգաբարձուները ապօրինի համարեցին ամեն անգամ այդ ընտրութիւնը և թոյլ չեն տալիս, որ իրանց կեղտոտ գործերը պարզվեն. սուտ ու փուտ ինչ որ արձանագրութիւն է կազմել (ով տեղեկութիւն չունի) և ուղարկել Էջմիածին. առանց ամաչելու գոռում-գոչում են, որ իրանք հոգաբարձուներ են, իրանք իրաւունք ունեն դպրոցին նոյնիսկ կրակ տալու: Անյատակութիւնը այս երկու շաբաթ է, որ շարունակվում է: Հոգաբարձուները բոլորի զզուանքն են վայելում: Չեն թոյլ տալիս, որ իրանց գործերում միջամտի հասարակութիւնը (!!), թաքցնում են այն պատճառները, որոնց հիման վրա հեռացրել են յիշեալ ուսուցիչներին: Նոյնիսկ իրանք, հեռացված ուսուցիչները անգամ չը գիտեն այդ պատճառների մասին. արձանագրութեան պատճէն են ուզում, չեն տալիս, կարծես Աֆրիկայի վայրենիների երկրում ապրում լինենք. ով է տեսել, որ մեղադրեալին չը յայտնեն նրա յանցանքը:

Բայց մի պարզ բան է բոլորի համար. հոգաբարձուների այդ կեղտոտ և ապօրինի վարմունքի միակ սկզբնապատճառը այս է. որ յիշեալ երկու ուսուցիչները ոչ միայն չեն խոնարհվել ազա-հոգաբարձուների առաջ, ոչ միայն բազմաթիւ դէպքերում ցոյց են տուել, որ այդ տիպիկ աղաները իրանցից մի-մի ագիտութեան մարմնացումն են ներկայացնում և անկարող են դպրոցական գործը ղեկավարելու, այլև նրանք յանդգնել են հրապարակով, մամուլի միջոցով յայտնելու, որ հոգաբարձուները գող են, աւազակ են: Ընթերցող, տես «Մշակ» լրագրի № 262 (1906 թ.) կարդա և կը համոզվես. այդ նամակում ուսուցիչները պաշտպանում են հասարակական շահերը, պահանջում են, որ ժողովրդի կլանված տասնեակ հազարները յետ դարձվեն: Աւելի ուղիղ. Բայց որովհետև այդ փողերը իւրացնողներից կան և հոգաբարձական կազմի մէջ, ուստի իրանց վրէժը այդ կերպ վճռեցին լուծել «յանդուգն» ուսուցիչներից՝ հեռացնելով նրանց դպրոցներից և մի կրթական հաստատութեան, 500 աշակերտ - աշակերտուհիների վիճակը անտես առան: Ախր մինչև երբ. մինչև երբ պէտք է արդարութիւնը ոտքի տակ տրորվի, տրորվի վայրենի, կոպիտ ույժի շնորհիւ: Եւ այդ բոլորին մասնակից է տեղիս գործակալ վարդապետը, որը այդ խայտառակ մարդկանց ամենաջերմ աջակցութիւնն է ցոյց տալիս և Էջմիածնից ինչ-ինչ կարգադրութիւններ բերել տալով, ժամանակ է որսում: Այդ ևս պատճառ ունի. մեր վարդապետն ևս դրված տեղ ունի (տես «Մշակի» յիշեալ №-ը): Բայց միթէ այդպէս պէտք է դատել, միթէ մասնաւոր գործը պէտք է ընդհանրութեան շահերի հետ գլխովին չփոթել: Ամօթ է պարոններ: Ուշքի եկէք, ձեր ճակատին այլ ևս մաքուր բիծ չէ մնացել և դուք դարձեալ շարունակում էք ձեր կամայականութիւնները կրքից կուրացած: Ձեր սխրագործութիւնները հրատարակել է և մամուլը (մի նմուշ տես «Ժամանակ» № 8, «Հայելի» № 7):

Սանձեցէք ձեր կրքերը, բաւական է. Նոյնպէս դուք վարվեցիք անցեալ տարի, նոյնը կրկնում էք և այժմ. ինչ է ձեր արածը, ինչ էք արել որպէս հոգաբարձու: Դուք անբարեխիղճ կերպով հեռացնում էք ուսուցիչներից այնպիսիներին, որոնք իրանց պաշտօնավարութեան ընթացքում կատարել են և ձեր դերը, հոգաբարձութեան դերը. այդ յայտնի է բոլորին: Միթէ նրանք մեղաւոր են այն բանում, որ գողի ճակատին պարզապէս ասել են, թէ «դու գող ես»: Հոգաբարձուներ! ձեր բռնած դիրքը, կրքերը վերջ ի վերջոյ կը սանձվեն այնպիսի բռնի ույժով, ինչպիսին դուք հրապարակ հանեցիք: Միթէ վայրենի անունը չէ կարելի տալ այն մարդկանց, որոնք, ծխական ժողովը խանգարելու նպատակով, գոռգոռոց են գցում, կանչում.—«Կարապետ, Հայրապետ, ուր էք գնացել եկէք»:—Եւ ձեր Կարապետներն ու Հայրապետները յայտնվում են դագանակներով ու խանգարում ժողովը, որ գումարված էր ձեր կեղտոտ գործերը քննելու, ձեր դիմակը պատռելու և ձեզ դուրս վռնդելու հասարակական ասպարէզից, տղրուկներ, վամպիրներ: Բայց համբերեցէք ևս մի քանի օր, և գիտակից հասարակութիւնը ցոյց կը տայ ձեզ ձեր արժանաւոր տեղը:

Դաւթին

ԵՐԵԿՈՅԹԸ ԲԱԹՈՒՄՈՒՄ

Մարտի 1-ին

Փետրվարի 28-ին, երեկոյեան, կայացաւ հասարակական ժողովարանում մի «հայկական երեկոյթ»: Երեկոյթը բաղկացած էր երեք բաժնից. առաջին՝ երկու բաժինները, ու խմբական երգեր էին՝ անցան շատ թոյլ:

Չը նայած պ. Գ. Միրզոյեանի եռանդուն ջանքերին, որ նա գործ դրաւ խումբը պատրաստելու ժամանակ, բայց և այնպէս արդիւնքը մխիթարական չեղաւ: Ի վերջոյ երրորդ բաժնի հերթում, որը բաղկացած էր «Գիւղական հարսանիքից» և պարերից, ամբողջ հասարակութիւնը երկար սպասեց, լարված ուշադրութեամբ մինչև վարագոյրի բարձրանալը:

Շատ հետաքրքիր և նորութիւն էր «Գիւղական հարսանիքը»: Առաջին անգամն էր դրվում հայկական բեմի վրա այդպիսի մի բնորոշ բան Բաթումում:

Բայց այս էլ թերութիւնից զերծ չէր. օրինակ շատերից մէկ.—երբ հերթը հարսին եկաւ պարելու, սա մի ուժեղ թափով ցատկեց ու սկսեց պարել արագ, համարձակ, որը և խանգարեց ամբողջ օրգինալը: Մինչդեռ մեր գիւղական հարսերը, այնքան մեղմ, այնքան թեթևաշարժ ու ամօթխած են, որ ման գալու կամ շարժվելու ժամանակ եթէ ձուի վրա կոխեն չի կոտրվի... Սրա վրա աւելացրէք և հասարակութեան մէջ բարձրացած աղաղակը՝ «չենք տեսնում, նստէք»... Ընդհանրապէս աւելի շատ էին վեր կենում առաջին նստարանների վրայից և յետևի հանդիսատեսներին զրկում բեմը տեսնելուց: Մի կերպ սա էլ վերջացաւ մի քանի հայկական պարերով, որոնց մասին յիշել էլ չարժէ... Սա անտանելի ներքին մասն էր:

Տեսնենք բեմից դուրս ինչ է կատարվում: Կար ամեն բան՝ վիճակախաղ, պօստ, քիօսկեր շքեղ տեսքերով, որոնց մէջ զանազան տեսակ իրեղէններ էին ծախում. կար բուֆետ, ընդհանուր եւրոպական պարեր... Բնորոշ է յիշել այստեղ մի տգեղ բան. դահլիճում սկսեցին մօտ երեք հարիւր հոգով պարել հայկական պարեր, միևնոյն ժամանակ մեր տղերքը, զուռնայ դուդուկով սկսեցին պարել մի ուրիշ պար: Սկսվեց մրցումը, որքան ջանքերումը ջան կար, ձայներումը ձայն կար բղաւում էին. մի ժամանակ այնպէս գոռոց բարձրացրին առաջինները, որ էլ դաւուլ-զուռնան չէր լսվում, իսկ վերջիններն էլ չէին լռում... Սա շատ տգեղ երևոյթ էր, որ կատարվեց մօտ երկու հազարից աւելի՝ ամեն ազգութիւններից բաղկացած հանդիսատեսների առաջ:

Ես էլ չեմ գրում. այսպէս սկսվեց, այսպէս վերջացաւ մինչև առաւօտ: Ժողովուրդը ցրվեց հերթով...

Վ. Մարտիրոսեան

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԻՆ

«Ժամանակի» № 38-ում տպված է հետևեալ հեռագիրը. «Երևան, 17 փետրվարի, 11 ժամ 25 ր. Դաշնակցութեան ջանքերով գտնված է և ծնողներին յանձնված Եզօր Տէր-Բարսեղեանի երեխան: Փարհատ»:

Որքան զայրոյթ էր պատճառել հասարակութեանը երեխայի կորուստը, նոյնքան էլ այժմ ուրախութիւն է պատճառում նրա գտնվելը. եթէ այնքան միամիտ լինենք, որ դրա համար շնորհակալութիւն յայտնենք գտնողներին, որ ղեկավարական հրաշագործների տպաւորութիւն են թողնում, յաւէնայն դէպս իրաւունք ունենք խորհելու, որ երևի դաշնակցութիւնն է զայրացաւ այդ եղերական դէպքից, որ և միջամտեց և սուրբ փրկչի դերը խաղաց:

Բայց մի հարց. երեխային ոչ երկնքից իջեցրին և ոչ գետնի տակից բուսցրեցին: Այլ, երևի մի խուլիգանի ձեռից հանեցին, բերեցին. ուստի հրաւիրում ենք Դաշնակցութեանը հրապարակ հանել այն տունը, որտեղից դուրս եկաւ երեխան և այն քաջագործներին, որ կատարել են յիշեալ ոճրագործութիւնը և այն ժամանակ մենք ևս կերկրպագենք այդ նորալոյս փրկչներին: Այդ է պահանջում հասարակութեան անզօրութիւնը:

Անշուշտ Եզօր Տէր-Բարսեղեանը կուրանայ, հանգամանքներից ստիպված, ծեծ և որքան փրկանք տուած լինելը, բայց յամառ կերպով լուրեր են պտտվում, որ երեխան պահված է եղել Իգդիրում և հօրից 4 հազար րուբլի փրկանք ստանալով, վերադարձրել են:

Մարգարէի մէկը տիկերով ջուր է թաղում դաշտում, որպէսզի ժողովրդին հրաշք ցոյց տալու համար, նրանց ներկայութեամբ, գաւազանով խփելով ջուր հոսեցնի և դրանով հաւատացեալներ գրաւէ. սակայն վայրենի խոզը տեղեակ չը լինելով խաբեբայ մարգարէի կեղծութեանը՝ պատռում են տիկերը, ջուրը հոսում է և ամօթահար թողնում մարգարէին, որի պատճառով էլ հաւատացեալները հրաժարվում են անիծեալ խոզի միսը ճաշակել:

Հաւատացած եմ, որ պ. Տէր-Բարսեղեանի որդու կորչելու գաղտնիքը երևան հանելու համար՝ Իգդիրի մի խումբ մարդիկ չեն զլանայ «Ժամանակի» մէջ «Մշակ»-ին մատնիչ և ստոր յայտարարելով, գոռում-գոչում բարձրացնել: Սակայն այդ գոռում-գոչում սարքողները հասարակական կեանքը հանել են նորմալ դրութիւնից. Ժամանակ է որ վերջապէս ազատվենք սրիկաներից. այդ օրինակ մերկացումները մատնութիւն չեն. դրանից ազգը չի կործանվի, այլ կը վերականգնվի:

Գ. Օ. Նունուֆարեան

Երևան, փետրվարի 23-ին, 1907 թ.

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Նոր-Բայազէտ, փետրվարի 21-ին

«Մշակի» № 13-ում գրած թղթակցութիւնը, որտեղ յիշված եմ մեր գաւառի համար գործակալ ընտրելու մասին, կարծեմ իրականութիւն ստացաւ: Հոգևոր կառավարութեան կարգադրութեամբ տեղիս գործակալի պաշտօնակատար Ս. քահ. Ազարեանցը նշանակել էր պատուիրակների ընտրութիւնը փետր. 11-ին: Մեր քաղաքը որովհետև 850 չափահաս ընտրող անդամներ ունէր և մի քանի տուն [illegible], ուստի կօնդակի համաձայն ժողովին ներկայ լինելու էր 1/5-ական մասը, որև պատուիրակ պիտի տար 9 հոգի: Սակայն նոյն օրը ժողովը չը կայացաւ, օրինաւոր թիւ չը լինելու համար, ուստի յետաձգվեց 3 օրից յետոյ — ամսիս 14-ին: Այդ օրը հաւաքվեցին մօտ 60—65 հոգի ծխականներ, որոնք նախագահ ընտրեցին Ս. քահ. Ազարեանցին, իսկ քարտուղար՝ սարկաւագ Ի. Տէր-Մովսէսեանցին:

Նախ քան ընտրութիւն կայացնելը, հարցեր զրվեցին ժողովրդի տրամադրութիւնը իմանալու թէ, արդեօք ում ի նկատի ունեն իրանց համար իբր գործակալ: Եղան ցանկացողներ՝ նախ Կիւրեղ վարդապետ Կիւրեղեանցին, որը 14—15 տարի սրանից առաջ եղել է մեր քաղաքում նոյնպէս բարեկարգչի պաշտօնով և մեծ համակրութիւն վայելել մեր քաղաքացիների կողմից, որև փոխադարձաբար ինքը նոյնպէս սիրել և համակրել է մեր հասարակութեանը: Եղան ցանկացողներ նաև Խորէն վարդապետ Մուրադբէգեանցին, որը նմանապէս 4—5 տարի առաջ մեր գործակալն էր և որի փայլուն գործերից մէկն է մեր եկեղեցու կառուցման գործը: Շատ վիճելուց և կարծիքներ յայտնելուց յետոյ՝ ժողովը որոշեց ընտրել նախ Խորէնին (քանի որ հաստատ փաստեր կային, որ նա մեզ մօտ չի գայ) և ապա Կիւրեղին, որին մի քանի երիտասարդներ նամակ էին գրել և համաձայնութիւն խնդրել: Սակայն ժողովականներից մի քանիսը, որոնք համամիտ չէին՝ դնել երկուսի էլ թեկնածութիւնը՝ թողին դահլիճը և հեռացան:

Արդէն ընթերցողին հասկանալի է թէ ասպարէզն ումը մնաց: Կուսակցականները աւելի ուրախացան, երբ մնաց իրանց մեծամասնութիւնը, մանաւանդ որ դրանց անդամները բոլորը իրանց դիրքերում էին... Նոյնիսկ ուղարկեցին քաղաքից կանչել իրանց մարդկանց և այլն: Էլ աւելի խրախուսված այդ հանգամանքից, որ ասպարէզը իրանցը մնաց, սկսեցին էլ աւելի աղմկել... Բաժանվեցին թերթիկները և մեր քաղաքի գործիչները ընտրեցին իրանց միջից 9 հոգի զուտ դաշնակցական համարված պատուիրակներ, որոնք փետրվարի 18-ին, գաւառից եկող 96 պատուիրակների հետ միասին պէտք է ընտրէին գործակալ: Բայց այդ օրը սաստիկ բուք ու բորան և ճանապարհների փակման պատճառով գաւառի պատուիրակները չը կարողացան գալ մեր քաղաքը (եկել էին միայն 10—12 հոգի), ուստի ընտրութիւնը մի ամսով յետաձգվեց.

Որսորդ

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

Փետրվարի 12-ին

Փետրվարի 9-ին, Աստրախանում նշանակված էր Պետական Դումայի պատգամաւորի ընտրութիւնը: Վաղօրօք, դեռ պատուիրակների ընտրութեան ժամանակ, տեղիս երկու զօրեղ կուսակցութիւնները ս.-դէները և կադէտները՝ բլօկ էին կազմել—միապետականներին ջարդելու համար և վերջիններս փառաւոր կերպով ջարդվեցան: 80 պատուիրակներից ընտրվեցան մօտ 48 հոգի կադէտներ, 21 ս.-դէներ, և 10 միապետականներ: Ս.-Դէներին և կադէտների մէջ բլօկը կազմված էր միայն պատուիրակների ընտրութեան համար. և այդ էր պատճառը, որ պատուիրակների ընտրութիւններից յետոյ՝ ամեն մէկը Պետական Դումայի անդամութեան համար դրեց իր թեկնածուին. միապետականների կոմիտէն էլ տեսնելով՝ որ իրանք ջարդվեցան, այդ պատճառով վճռեց չմասնակցել պատգամաւորների ընտրութեան ժամանակ և ընտրութեան օրը այդ տասը հոգին բացակայում էին: Կադէտների կողմից Պետական Դումայի պատգամաւորութեան համար դրված էր երդուեալ հաւատարմատար Շմարինի (ռուս) թեկնածութիւնը, իսկ ս.-դէների կողմից—յայտնի գրող՝ Վ. Տօզօմեանցը: Ձայների մեծամասնութեամբ ընտրվեց Շմարինը—կադէտ: Ընտրվածը յայտնի է քաղաքումս իբրև [illegible] և ազնիւ հասարակական գործիչ, ունի նաև գեղեցիկ խօսելու ընդունակութիւն:

Պէտք է նկատել, սակայն, որ ընդհանրապէս ժողովրդի մէջ չի նկատվում այն ոգևորութիւնը, այն հետաքրքրութիւնը դէպի ընտրութիւնները, ինչ որ անցեալ տարի և պատուիրակների օրը անցաւ շատ խաղաղ, առանց մի որևէ միջադէպի: Ահա երկրորդ անգամն է, որ մեր քաղաքը կադէտ պատգամաւոր է տալիս: Կադէտ պատուիրակները և համակրողները նորընտիր պատգամաւոր Շմարինին ճաշ տուեցին, որտեղ արտասանվեցին ճառեր, եղան բարեմաղթութիւններ:

Վերջապէս մեր առաջնորդի ընտրութիւնը վերջացաւ, բայց այս անգամ դարձեալ մի թերութիւնով—կիսատ: Կօնդակով պէտք է ընտրվի երկու թեկնածու. բայց թերթից ստացված ձայները ցոյց են տալիս, որ բացարձակ մեծամասնութիւն ստացել է թեկնածուներից միայն մէկը—Մխիթար վարդապետը, իսկ միւս թեկնածուները ստացել են համեմատական մեծամասնութիւն, որոնց և չէ կարելի ընտրված համարել: Հեռագրված է այս մասին Վեհափառին, որից դեռ պատասխան չէ ստացված:

Ս. քահ. Ասլանեան.

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Այսպիսով, եթէ մենք պարլամենտարիզմի մասին արված վերոյիշեալ յանդիմանութիւնը ընդունենք, այն ժամանակ մենք պէտք է մահվան դատավճիռ կարդանք բանւորական շարժման դէմ ընդհանրապէս, կամ, գոնէ, նրա այն բոլոր ձևերի դէմ, որ ներկայումս ունի:

Անկարելի է, սակայն, հաստատապէս ասել, թէ ներկայացուցչական հաստատութիւնների համար եղած ընտրութիւնների ժամանակ բանւորների վրա աւելի ճնշում են բանեցնում, քան նրանց գործունէութեան միւս այն բոլոր դէպքերի ժամանակ, որոնք դասակարգային կուին են վերաբերում: Ընդհակառակը: Ճնշումը կարելի է բոլորովին հեռացնել, գոնէ, քուէարկութեան ժամանակ, ընտրողական պայքարի ամենավճռական մոմենտին, գաղտնի ձայնատուութեան միջոցով, որ և արդէն գոյութիւն ունի համարեա թէ բոլոր պարլամենտական երկրներում, թէև ամեն տեղ էլ դա դեռ այնպիսի կատարեալ ձևի չէ հասած, որ կարողանայ բոլորովին իր նպատակին ծառայել: Գաղտնի քուէ տալը բանւորին աւելի անկախ է դարձնում ընտրութիւնների ժամանակ, քան նրա դասակարգային կուի մի որևէ այլ ձևի ժամանակ: Մինչև իսկ Գերմանիայում, ուր ընտրութիւնների եղանակը շատ աւելի վատ է դրված, քուէարկութիւնը գաղտնի անելու համար, քան օրինակի համար Անգլիայում, այնուամենայնիւ բանւորներից շատերը, որոնք չեն համարձակվում պրոֆեսիոնալ միութիւնների մէջ մտնել, կամ սօցիալիստական թերթ ստանալ, կարողանում են իրանց քուէն սօցիալ-դեմոկրատներին տալ:

Կարճ խօսելով, ինչ կողմից էլ որ մենք քննենք ներկայացուցչական սիստեմը, մենք անկարող կը լինենք այնպիսի մի գիծ դուրս բերել, որը բանւոր դասակարգի համար հիմք ծառայէր իրան հեռու պահելու պարլամենտից, այն պարլամենտից, որը մի անգամ ընդմիշտ ներկայանում է և, ներկայ հասարակական կարգերի օրով, անխուսափելիօրէն պէտք է ներկայանայ մեր քաղաքական կեանքի կենտրոնը:

Այժմ բուրժուազիան էլ այլևս չէ ընդունում Րիտտինգհաուզէնի ու նրա հետևողների այն կարծիքը, թէ ներկայացուցչական սիստեմի ամեն մի ձևը, թէկուզ դեմոկրատականն էլ, նրա տիրապետութիւնն է ապահովում:

Բուրժուազիան դեռ կարող էր ընդհանուր ընտրողական իրաւունքը անվտանգ համարել այն ժամանակ, երբ Րիտտինգհաուզէնը իր գաղափարն էր արտայայտում անմիջական օրէնսդրութեան մասին, և երբ Բիսմարկը համաձայնեց գաղտնի ընտրողական իրաւունք մտցնել (Հիւսիսային գերմանական միութիւնը հաստատելու ժամանակ, 1867 թ.): Այդ պատճառով էլ ընտրողական իրաւունքը չէր կարող այստեղ պարլամենտարիզմի էական գծերի մէջ յեղաշրջում առաջացնել:

Բօնապարտեան կարծեցեալ պարլամենտարիզմը չէր կարող շատ էլ հետաքրքրել բանւորներին: Գերմանական ռէյխստագի իրաւասութիւնները անգամ շատ մեծ բան կարելի է համարել, ֆրանսիական կայսրութեան օրէնսդրական մարմնի համեմատութեամբ, նամանաւանդ կայսրութեան առաջին շըրջանում *):

Այսպէս ուրեմն, ֆրանսիական երկրորդ կայսրութեան օրով, կատարված ընդհանուր ընտրողական իրաւունքի փորձերը չէին կարող 1867 թ. վախեցնել ոչ Բիսմարկին և ոչ էլ Դիզրայէլիին այն աստիճան, որպէսզի նրանք զգուշանային ընտրողական իրաւունքը ընդարձակելուց:

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մօզդօկ, փետրվարի 27-ին

Քաղաքիս երգեցիկ հայ սիրողների երկսեռ խումբը՝ իր չքաւոր անդամների օգտին ամսիս 18-ին իմ ղեկավարութեամբ տրված երեկոյթի բուֆէտի արդիւնքը յատկացրել էր հայ աղէտեալներին: Այդ գումարը՝ 24 ր. 45 կ. փոխադրելով ձեզ, խնդրում ենք յանձնել ուր հարկն է:

Խնդրեմ «Մշակ»-ի մօտակայ համարներից մէկում երկտող տեղաւորէք ի գիտութիւն երեկոյթին մասնակցողներին:

Պարտք եմ համարում ի դիմաց երգեցիկ խմբի շնորհակալութիւն յայտնել յարգելի Դէմուրեան ամուսիններին և օր. Ն. Լիսիցեանին, որոնք երեկոյթին երգերի բաժնում մի քանի համարները կատարեցին իրանց մասնակցութեամբ: Նոյնպէս ի դիմաց խմբի յայտնում եմ շնորհակալութիւն յարգելի Եաշաեան ամուսիններին, Օհանեան ամուսիններին և Տ. Շ. Տօնականեանին, որոնք բուֆէտի ամբողջ աշխատութիւնը իրանց վրա վերցրին:

Այստեղ մի խումբ տիկիններ պատրաստվում են մի երեկոյթ տալ հայ աղէտեալների օգտին. ցանկանում ենք աջողութիւն:

Տ. Տօնականեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վաղուց է ինչ գոյութիւն ունի Թիֆլիսում կիրակնօրեայ աղջկանց մի ուսումնարան, որը գործում է լուռ, անշշուկ, բայց շատ օգտակար կերպով, մի խումբ տիկինների և օրիորդների բարեհաճ մասնակցութեամբ և օրիորդ Մաթիլդա Տէր-Միքայէլեանի վերահսկողութեամբ: Այդ ուսումնարանը գրագիտութիւն է տարածում, տարրական կրթութիւն է տալիս չքաւոր, զրկված դասակարգի աղջկանց: Նա իր ձեռքի տակ ունի և մի արհեստանոց, ուր աշակերտուհիները սովորում են ձրի: Աղջկանց կիրակնօրեայ ուսումնարանը ամեն տարի կատարում է մի դպրոցական հանդէս, հէնց իրանց աշակերտուհիների համար, ներկայացումներով, երգերով, պարերով: Այս տարի այդ հանդէսը տեղի ունեցաւ Յովնանեան դպրոցի դահլիճում, աշակերտուհիների և հիւրերի ներկայութեամբ: Աշակերտուհիները խաղացին բաւական աջող կերպով «Ադամ և Եւա» պիէսը, երգեցին մի քանի ազգային և ժողովրդական երգեր պ. Բէջիջեանի ղեկավարութեամբ, արտասանեցին ոտանաւորներ և յետոյ պարեցին զանազան հայկական պարեր: Վերջում աշակերտուհիներին տուին մի թեթև ընթրիք: Պէտք է քաջալերել այդ օգտակար հիմնարկութիւնը:

—

Աղէտեալների օգտին ստացանք. 1) Բաքուից—Աշխատուր Թադէոսեանից 100 ր., 2) Եկատերինօդարից—Եղիսաբէթ Աչքոպեանից 25 ր., 3) Երևանից—Յարութիւն Շամիլեանից իր որդի Սուրէնի տօնախմբութեան առիթով 11 ր., 4) Րաստօվից—Տ. Եղիա. Կուրանաքեանից 10 ր., տ. Հերիքնազ Ալաբալեանից 10 ր. և փոքրիկներ—Յուլիանէից, Սանդխտից, Ռաֆայէլից, Յովհաննէսից և Գասպարից 5 ր.:

—

Թիֆլիսի գործակատարների անկուսակցական պրոֆեսիոնալ դաշնակցութեան պատգամաւորների վերջին ժողովում որոշված է խնդրամատոյց լինել լեգալ դարձնելու յիշեալ ընկերութիւնը: Լեգալիզացիայի խնդիրը յանձնարարված է դաշնակցութեան բիւրոյին իրագործելու: Այդ միևնոյն ժողովում յայտնել են, որ մի քանի առևտրական հաստատութիւնների տէրերը խախտում են իրանց և գործակատարների միջև սահմանված պայմանագիրը օրվայ աշխատանքի ժամերի տևողութեան մասին, և այլն: Վճռված է դրա դէմ միջոցներ ձեռք առնել:

—

Թիֆլիսի մանր-վաճառականները խնդրամատոյց են եղել թոյլտուութիւն ստանալու, որպէսզի իրանց թոյլատրվի պրոֆեսիոնալ միութիւն կազմակերպելու:

—

Մարտի 3-ին 9-րդ քաղաքամասի ոստիկանութեան ձեռքով ձերբակալված է Երևանի բնակիչ Արամ Սամսոնեանը, որի մօտ խուզարկելու ժամանակ գտել են մի ատրճանակ իր փամփուշտներով: Ձերբակալվածին տարել են կօմենդանտի վարչութիւնը:

—

Մարտի 1-ին 5-րդ քաղաքամասի ոստիկանութիւնը կալանաւորել է 3-րդ արական գիմնազիայի 5-րդ դասարանի աշակերտ Նիկոլա Մակարովին, որի մօտ խուզարկութեան ժամանակ գտել են «բրաունինգ» տեսակի ատրճանակ փամփուշտներով լի: Կալանաւորվածին ուղարկել են կօմենդանտի վարչութիւնը:

—

Մարտի 3-ին, գիշերվայ ժամը 12-ին, Պուշկինսկայա փողոցում, Ակօրօվի խանութին մօտ երեք անյայտ չարագործներ ատրճանակի հարուածներով վիրաւորել են պարսից հիւպատոսի երկու թիկնապահներին՝ մէկին ոտից ու ձեռքից, իսկ միւսին՝ կրծքից: Վիրաւորվածները տարվել են Միքայէլեան հիւանդանոցը: Չարագործները անհետացել են:

—

Ստացանք «Ազգագրական Հանդէսի» XV գիրքը—1907 թ. № 1:

—

Հաղորդել են 7-րդ քաղաքամասի ոստիկանութեանը, որ մարտի 2-ին Թիֆլիսի քաղաքացի Գրիգոր Գասպարեանի 4 տարեկան տղան, մօր բացակայութեան ժամանակ մօտենալով վառվող վառարանին, այրել է հագի շորերը, որից երեխան ստացել է այնքան սաստիկ այրուածքներ, որ մի ժամից յետոյ մեռել է:

—

Փետրվարի 28-ին ոստիկանները բռնել են երեք երիտասարդների, որոնց մօտ խուզարկութեան միջոցին գտնված են «բրաունինգ» և դաշույններ: Ձերբակալվածների անունները են — Կարապետ Կուզեվ, Վանօ Կուլասաբեանց և Գէորգ Ալիբեկով, որոնք ուղարկված են կօմենդանտի վարչութիւնը:

—

Այսօր «Тифл. Обоз.» լրագիրը լոյս չէ տեսել, որովհետև խմբագրութիւնը միջոցների սղութեան պատճառով հրաժարվել է կատարել գրաշարների պահանջը և վարձգինը աւելացնել սովորական նորմայից:

—

Մարտի 3-ին ցերեկվայ ժամի 4-ին Թաժամչեանի տան դռնապան Գէորգ Տէր-Սահակեանը յայտնել է 5-րդ քաղաքամասի պրիստաւին, որ Պրիկազնայա փողոցում երեք զինված չարագործներ յարձակվել են իր վրա և ատրճանակից երեք անգամ ապարդիւն գնտակ արձակելուց յետոյ անյայտացել են։

---

*) Օրէնսդրական մարմինը ոչ իրաւունք ունէր իր համար նախագահ ընտրելու, ոչ օրէնսդրութեան նախաձեռնութեան իրաւունք ունէր, ոչ կարող էր պետիցիաներ ընդունել, ոչ հարցապնդումներ անել կառավարութեանը: Այդ օրէնսդրական մարմնի մէջ կարող էին քննութեան առնվել միմիայն այն օրէնքները, որոնք արդէն անցել էին Պետական Խորհրդից, ու եթէ օրէնսդրական մարմնի անդամներից մէկը ցանկանար ուղղում մտցնել օրէնքի մէջ, այդ ուղղումներն էլ պէտք է նախ Պետական Խորհրդից անցնէին և ապա միայն քննութեան ենթարկվէին: Պետական բիւջէտը պալատի կողմից թոյլատրելու իրաւունքի մասին խօսք անգամ չը կար սահմանադրութեան մէջ: Միմիայն մարտի 22-ին (1852 թ.) հրատարակված հրովարտակով որոշվեց, որ պալատը իրաւունք ունի, ինչպէս և մինչև այդ ժամանակին էր լինում, բիւջէտը թոյլատրել քննելու կէտ առ կէտ: Դա մի այնպիսի իրաւունք էր, որը, ինչպէս և եղել էր առաջներում, կարելի էր միշտ խլել կամ կրճատել: Կարելի է համարեա թէ մի մեծ շնորհ համարել այն հանգամանքը, որ այդ կարգի կօլլեգիաների խորհրդակցութիւնները պէտք է հրատարակութեան տրվէին ոչ թէ իբրև անխախտ հաշւետուութիւններ, այլ պաշտօնական պրօտօկօլների ձևով. բայց այդ սահմանափակում էլ, ի հարկէ, արվում էր կարծես այն յայտնի, որ կարող էին դեռ օպօզիցիային գրաւել այդ կօլլեգիայի մէջ մտնելու համար, որպէսզի նրանք հնարաւորութիւն ունենային ամբիոնի վրայից մի ազատ խօսք նետել ամբողջ երկրին»..

Սահմանադրական բիլ, 2-րդ կայսրութեան պատմութիւնը: Բեռլին, 1890 թ. եր 29. Տ. Հ.

—

Մարտի 2-ին, ցերեկվայ ժամի 12-ին, 9-րդ քաղաքամասի գորոդովոյը Սիմէօնովսկի փողոցի հանդէպ գտել է Թիֆլիսի քաղաքացի Գէօրգի Ժուրավլեվի դիակը դաշոյնի չորս վէրքեր կրծքի վրա։ Հարցուփորձից պարզվել է, որ Ժուրավլեվը դուրս է եկել իր բնակարանից մարտի 1-ին երեկոյեան և էլ չի վերադարձել։

—

Մարտի 3-ի գիշերվայ ժամի 1-ին արքունական բանկի բաժանմունքի մօտ կանգնող պահապան 79-րդ Կուրինեան հետևակ գնդի հասարակ զինուոր Դանիէլ Վաշինկօն սուինով վիրաւորել է աջ կողքից Պենզա քաղաքի բնակչուհի Եւդոկիա Կուզնեցովային, որ պնդում էր կանչել Պեօտր անունով, բայց ազգանունն անյայտ, գորոդովոյին։

—

9-րդ քաղաքամասի ոստիկանութիւնը կալանաւորել է գործակատարներ Մարտիրոս Մարգարովին և Կարապետ Սարգիսովին, որոնք մեղադրվում են Երևան քաղաքի բնակիչ Անդրէաս Աւագեանի սպանութեան մէջ։ Ականատեսները յայտնել են, որ սպանողները դրանք են եղել։

—

Մարտի 4-ին, գիշերվայ մօտաւորապէս ժամի 12-ին, 5-րդ քաղաքամասում Սերեբրեանի բաղում, հերթապահ դռնապանը նկատել է վիրաւոր կառապան Ֆէօդոր Միշչեվին, որը Միքայէլեան հիւանդանոցը տանելուն պէս մեռել է։ Ո՞վ և երբ է վիրաւորել՝ յայտնի չէ։

—

Մարտի 4-ին Ֆօմեննայա փողոցի անկիւնում երեք զինված չարագործներ յարձակվել են № 451 կառապան Էդեմջևի վրա և խլել են նրա օրվայ աշխատանքը 8 րուբլի։ Տասը րոպէից յետոյ նոյն տեղում կողոպտել են և կառապան Գէօրգի Ցադլիշվիլուն և խլելով նրա մօտ եղած 4 ր. 65 կոպէկը, անյայտացել են։

—

Երէկ, առաւօտեան ժամի $5^1/_2$-ին Նախալովկում սպանվել է ատրճանակի գնդակով երկաթուղու դէպօյի բանուոր Միքայէլ Միրաբաշվիլին։ Սպանողը անյայտացել է։

—

Բագուի քաղաքապետը, գրադանաչալնիկը, Կոնեվսկին, մարտի 1-ին Բագուի «Ռուս Մարդկանց» միութեան վարչական խորհրդին մի առանձին նամակ գրելով յայտնել է, որ ինքը՝ Կոնեվսկին պատրաստ է ընդունել այդ միութեան ներկայացուցիչներին մի որոշ օր։ Ինչպէս յայտնի է, պետական պաշտօնեաները պէտք է միանգամայն չէզոք դիրք ունենան, գոնէ այդպէս է հաւատացնում պ. Ստոլիպի՛ը իր այլևայլ շրջաբերականներով։ Արդեօք պ. Կոնեվսկին նոյնքան յօժարութիւն ցոյց կը տար ընդունելու ոչ թէ ծայրայեղ, այլ պարզ ձախակողմեաններին։

—

Բագուի քաղաքագլուխ Քեամիլ բէկ Սաֆար Ալիեվը, հիւանդութեան պատճառով, թոյլտուութիւն է ստացել քաղաքապետից երկու շաբաթով հեռանալու Բագուից։ Սաֆար Ալիեվի փոխարէն ժամանակաւորապէս նշանակված է, քաղաքային դումայի ձայնաւոր Յարութիւնովը։

—

Բագւում կազմվել է մի նոր ընկերութիւն «Քաղաքի դպրոցներում սովորող աշակերտներին նիւթական օգնութիւն հասցնելու» համար։ Յիշեալ ընկերութեան կազմութեան համար քաղաքային դումայի դահլիճում տեղի է ունեցել մի ժողով, որին ներկայ են եղել Բագուի քաղաքային դպրոցների ուսուցիչները, քաղաքային դումայի ուսումնարանական յանձնաժողովի անդամները և կրթասէր անձինք։

—

Բագուի հասարակական ժողովարանի ամառային շինութիւնը, հինգշաբթի օր, հրդեհի պատճառով, այրվել է։ Հասել է հրշէջների խումբը, բայց մինչև նրա ժամանելը, կլուբի ներքևի յարկը ամբողջապէս բռնկված է եղել արդէն։ Հրդեհը այնքան ուժգին է եղել, որ Բագուի հասարակութիւնը ամեն կողմից իսկոյն նշմարելով՝ թափվել է Միքայէլեան այգին, ուր գտնվում է կլուբը։ Հրդեհը հանգցրել են գիշերվայ ժամի 3-ին, կէս գիշերից յետոյ։ Ինչպէս ասացինք, այրվել է ամբողջ ներքևի յարկը, իսկ վերևի յարկից ազատվել են միայն թղթախաղի, ընթերցարանի և երաժշտութեան սենեակները։ Հրդեհից փչացել են և այգու ծառերը։ Դէպքի վայրն են հասել քաղաքապետը և ոստիկանապետը։ Հրդեհի պատճառ է եղել, ասում են, կամ ծառայողների անզգոյշ վերաբերմունքը դէպի կրակը և կամ չարամիտ մարդկանց դաւը։

—

Դումայի կուլուարներում տիրում է յուզված տրամադրութիւն։ Փետրվարի 27-ին Դումայի արձակման մասին տարածված լուրերը, որքան որ էլ նրանք պակաս հաւանական լինէին, այնուամենայնիւ իրանց ներգործութիւնը արեցին։ Պատգամաւորները միմեանց հետ փոխանակում էին տպաւորութիւններ, և արտայայտում էին իրանց դիտողութիւնները կառավարութեան այդ տեսակ քայլի հնարաւորութեան մասին։ Մի քանիսները արտայայտում էին կառավարչական շրջաններից բղխող լուրերը, թէ բիւրօկրատիայի և բարձր աստիճանաւորների ռէակցիօն մասը պահանջում է Դուման արձակել և դասային սկզբունքների վրա հիմնված նոր ընտրողական օրէնք հրատարակել։ Այս լուրերին ականջ են դնում լարված ուշադրութեամբ. մանաւանդ ճնշող տպաւորութիւն է թողնում՝ նահանգապետներին ուղղված շրջաբերականը, որով առաջադրվում է թոյլ չը տալ պատգամաւորներին խօսակցելու ազգաբնակութեան հետ։ («Новь»)

—

Մինսկի պատգամաւոր Իվանչչենկօն ստորագրութիւններ է հաւաքում ամենահպատակօրէն միջնորդութիւն յարուցելու մահվան պատժի դադարեցնելու մասին, մինչև որ նա կը վերացվի օրէնսդրական կարգով։ Փետրվարի 26-ին, Իվանչչենկօն այդ առիթով Ստոլիպինի հետ խօսակցութիւն է ունեցել։

(«Новь»)

—

Փետրվարի 20-ին Մոսկվայում կայացել է 115 տպարանների բանուորներից ընտրված պատուիրակների արտակարգ ժողովը։ Քննվել է լօկաուտի հարցը Մոսկվայում։ Ժողովին մասնակցել է Մոսկվայի տպագրողների դաշնակցութեան պատգամաւորը, որ զեկուցում է տուել իրերի դրութեան մասին Մոսկվայում։ Զեկուցումից պարզվել է, որ Մոսկվայի տպագրողների գործադուլը կարող է փոխադրվել Պետերբուրգ և ուրիշ քաղաքներ, որովհետև Կուշնարեօվի, Եակօվլեվի և ուրիշ խոշոր տպարաններ իրանց բաժանմունքները ունեն Ռուսաստանի բոլոր մեծ քաղաքներում, որոնց և տալիս են պատրաստելու Մոսկվայի աշխատանքները։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

2 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մարտի։ Պետերբուրգի քաղաքապետը հրատարակել է մի յայտարարութիւն, որով յայտնում է, թէ ի նկատի առնելով այն հանգամանքը, որ վերջին ժամանակներս փորձեր են լինում ֆաբրիկաներում և գործարաններում միտինգներ կազմելու կողմնակի անձանց մասնակցութեամբ, ուր վերջիններս քաղաքական ճառեր են ուղղում բանուորներին, յայտարարվում է, որ բանուորական ժողովները թոյլատրելի են միայն բանուորական կարիքների մասին խորհրդակցելու նպատակով և այն էլ իւրաքանչիւր անգամ յատուկ թոյլտուութեամբ, իսկ ապօրէն ժողովները թոյլատրելի չեն և պէտք է խափանվեն գործարանի ադմինիստրացիայի միջոցով, որի մասին պէտք է տեղեկացնել ոստիկանութեանը։ Եթէ, չը նայելով ադմինիստրացիայի և ոստիկանութեան ձեռք առած միջոցներին՝ ապօրէն ժողովները դարձեալ շարունակվելու լինեն, այն ժամանակ արտակարգ դրութեան օրէնքների հիման վրա բացի յանցաւորներին պատասխանատուութեան ենթարկելուց, յիշեալ ձեռնարկութիւնները սահմանված կարգով կը փակվեն։

ՍԿՕՊԻՆ, 2 մարտի։ Տօպիլի կայարանի մօտ ապրանքատար գնացքի ընդհարում առաջացաւ։ Շրջակայքի գիւղացիներից բաղկացած 2000-աչափ ամբոխը սկսեց թալանել վագոնները։ Թալանը վերջացել է կօզակների օգնութեամբ։

3 մարտի

ՄՈՍԿՎԱ, 1 մարտի։ Էլեքտրաքարշի երթևեկութիւնը վերսկսվեց։ Առայժմ երթևեկութիւնը կը կատարվի միայն ցերեկը, որովհետև վարչութիւնը վախենում է գիշերները բանեցնել։

Երեկոյեան մեծ թատրօնի վեստիբիւլում կալանաւորված է հրէական տիպ ունեցող մի կին, որը հետևում էր քաղաքապետին։ Նրա մօտ գտնվել է բրաունինգ՝ թունաւորված գնդակներով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մարտի։ Դումայի դահլիճի փլուածքը դիտել է պրօկուրօրը։ Գործի քննութեան ղեկավարութիւնը յանձնարարված է Պետերբուրգի պալատի պրօկուրօր Կամիշանսկուն։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մարտի։ Մինիստրների Խորհրդի նախագահը ընդունելով Դումայի սօցիալ-դեմօկրատական ֆրակցիայի պատգամաւորութիւնը ի դէմս Գլիբէնկօյի և Սալտիկօվի, որոնք բողոք են ներկայացրել մայրաքաղաքի ոստիկանութեան գործողութիւնների դէմ, որ գնացել է և խուզարկել Պետական Դումայի անդամ Մախարաձէի բնակարանը, բացատրել է, որ այդ դէպքի մասին քաղաքապետը արդէն զ՚եկուցել է իրան։ Մախարաձէի բնակարանը ոստիկան պահակներ ուղարկելու շարժառիթը եղել է այն, որ տնատէրը յայտնել է ոստիկանութեանը, թէ այնտեղ բազմամարդ ժողովներ են տեղի ունենում և ինքը դրա պատասխանատուութիւնը իր վրա առնել չէ կարող։ Տնատիրոջ յայտարարութիւնը ստուգելու նպատակով ոստիկաններ են ուղարկել։ Առհասարակ բոլոր դռնփակ մասնաւոր նիստերը, առանց կողմնակի մարդկանց ներկայութեան, թոյլատրելի են միայն 1905 թւի մարտի 4-ի օրէնքի ճիշտ հիման վրա։ Իսկ սօց.-դեմօկրատների հրապարակական ժողովները, որպէս ապօրէն մի կուսակցութեան, որ հետամտում է որոշ յանցաւոր նպատակներ, անթոյլատրելի են և հաւաքվելու դէպքում տեղական ոստիկանութիւնը պէտք է փակէ ժողովը, իսկ մասնակցողներին կալանաւորէ։

Կադէտների խնդիրքը կուսակցութիւնը լեգալ դարձնելու համար, նորից մերժումն է ստացել, որովհետև ծրագրում չեն մատնանշված կուսակցութեան նպատակներին հասնելու միջոցները, որոնք կարող են լինել ապօրէն և հասարակական խաղաղութեան համար վտանգաւոր։

ՍՕՖԻԱ, 2 մարտի։ Պետկօվի սպանողը խոստովանել է, որ սպանութիւնը կատարել է օպպօզիցիօն ժամուլի ագիտացիայի ազդեցութեան ներքոյ, նոյնպէս և նիւթական յուսահատական վիճակից դրդված։ Նա մի քանի անգամ սպանութիւնը կատարելու մասին մտածել է ուրիշների մասնակցութեամբ, վճռված է եղել սպանել իշ. Ֆերդինանդին կամ մինիստր նախագահին ներկայ ռեժիմին վերջ տալու նպատակով։ Դատաստանական քննութիւնը հաստատել է, որ ուսանողութեան սօց.-դեմօկրատական տարրերը, որոնք թատրօնի բացման ժամանակ ցոյց էին արել իշ. Ֆերդինանդի դէմ, մեղսակից են այդ սպանութեանը։ Կալանաւորված են մի քանի ուսանողներ։

ԼՕՆԴՕՆ, 2 մարտի։ «Դէյլի Մէյլ» լրագրին հաղորդում են Բոմբէյից, որ ի նկատի առնելով Պարսկաստանի խռովայոյզ դրութիւնը՝ հնդկական կառավարութիւնը բանակցութիւն է սկսել Թէհրանի անգլիական դեսպանութեան հետ, պարզելու այն միջոցները, որոնք հարկաւոր կը լինեն Պարսկաստանում անգլիական հիւպատոսարանների պահպանութեան համար։ Զօրքերը պատրաստ կը պահվեն ուղարկելու համար։

ՎԻԲՕՐԳ, 2 մարտի։ Երեկոյեան ժամի 9-ից Ֆինլանդիայում սկսվում են առաջին սէյմի անդամների ընտրութիւնները ընդհանուր ընտրողական իրաւունքների հիման վրա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մարտի։ Աւստրո-Ունգարական դեսպան կոմս Բերխտօլդը մասնաւոր ունկնդրութեամբ ներկայացել է Թագաւոր Կայսրին Ցարսկոյէ-Սելօյում և յայտնել Ֆրանց Յօզէֆ կայսրի ողջոյնը։

ԼՕՆԴՕՆ, 2 մարտի։ «Րէյտերի» գործակալութիւնը հաղորդում է, որ վերջնականապէս վճռված է Հաագայի կօնֆերենցիայում հարց զարթեցնել զինաթափութեան մասին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 մարտի։ Արտակարգ դրութեան հիման վրա փակված է «Русское Богатство» ամսաթերթի աշխատակից Իվանչին-Պիսարէվի տպարանը՝ «Благо-Народа» լրագրի առաջին համարը տպագրելու համար, որը լոյս է տեսել Պետական Դումայի սօց.-յեղ. ֆրակցիայի անդամ Ժիժինի խմբագրութեամբ։ Նոյն հիման վրա դադարեցրել են և սօց.-դեմ. փոքրամասնականների օրգան «Русская Жизнь» լրագիրը։

ՍՕՖԻԱ, 3 մարտի։ Գիշերը կայարանի մօտ գնդակահար է արված մակեդոնական արշաւախմբի պարագլուխ Տրայկօ Խրիստովը։ Սպանողը անյայտացել է։

ԴՐԷԶԴԷՆ, 3 մարտի։ Ռուսաց ուսանողներին արդարացնելու դատավճիռը կարդալուց յետոյ, որոնք մեղադրվում էին ռէյխստագի ընտրութիւնների ժամանակ ագիտացիա անելու համար, դատարանի նախագահը հետևեալ նախազգուշացումը արեց. «Ռուսաց ուսանողները գտնվում են օտար երկրում և այդ երկիրը երբէք թոյլ չի տայ, որպէսզի նրա մէջ երևան գան յեղափոխական ձգտումներ ուղղված Ռուսաստանի դէմ, որի հետ Գերմանիան բարեկամութիւն է պահպանում»։

ԹԷՀՐԱՆ, 3 մարտի։ Միլիցիայի ամենօրեայ զինավարժութիւնները սարսափ էին ազդում խաղաղ ազգաբնակութեան վրա. շահի հրամանով այժմ դադարեցրել են։ Սպահանի պատգամաւորութիւնը, որ եկել է բողոքելու զիլլի-սուլթանի դէմ, յայտնել է որ Մէջլիսից դուրս չի գայ, մինչև որ չը հրաժարեցնեն պաշտօնից Սպահանի նահանգապետին։ Յատուկ պաշտօնեայ է ուղարկված այնտեղ քննութիւն կատարելու։

ԼՕՆԴՕՆ, 3 մարտի։ Թէհրանից հաղորդում են, որ ռուսական հիւպատոսարանները Պարսկաստանում իրանց պահակների թիւը աւելացնում են։ Բօյկօտ է սկսվում օտարերկրեայ ապրանքների դէմ, գները իջեցնելու նպատակով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 մարտի։ Այսօր Մարիինսկի պալատական եկեղեցում Պետական Խորհրդի անդամների ներկայութեամբ գոհացողական մաղթանք է կատարվել Պետական Դումայի անդամների սպառնացող վտանգից՝ ազատվելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 մարտի։ Ցերեկվայ ժամի 3-ից բանուորները սկսել են աշխատել Պետական Դումայի դահլիճում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 մարտի։ Շինարարական կօմիսսիայի որոշմամբ, որը հաստատութիւն է գտել Պետական Դումայի կարգադրիչ կօմիսսիայի կողմից, նիստի դահլիճի նորոգութեան ամբողջ գործունէութիւնը պիտի աւարտվէ մինչև մարտի 8-ի երեկոն։ Աշխատանքների վրա հսկող ճարտարապետ Բրունին հաւատացած է, որ կաւարտէ մինչև որոշված ժամանակը։ Գործերի վրա աշխատում են սալեօրները փոխ առ փոխ խմբերով—ամեն մէկում 300 հոգի։ Ազատ մնացած թեք գրասեղանները (пюпитеръ) հանված են դահլիճից։ Անակնկալ դէպքերի առաջն առնելու համար Եկատերինեան դահլիճի առաստաղը ամրացվում է առանձին սիստեմով։

ԽԱՐԿՈՎ, 4 մարտի։ Փետրվարի 28-ին վիրաւորված գորոդովոյ Գերբը, ոտը անդամահատելուց յետոյ, վախճանվեց։ Գորոդովոյ Ֆրոլովի դրութիւնը անյոյս է։ Երեք տերրօրիստների մարմինները անդամահատելուց երևաց, որ մէկը սպանված է գորոդովոյի ձեռքով, երկրորդը ինքնասպանութիւն է գործել, իսկ երրորդին սպանել են իր ընկերները ոստիկանութեան հետ կռւելու ժամանակ։ Բնակարանի տէրերը—ուսանողները տանը չէին, թագնվել էին։ Համալսարանի շէնքը գիշերը շրջապատվեց կօզակներով ու ոստիկաններով։ Երեք լսարաններում ժողով էր գումարված։ Ձերբակալված են մօտ հարիւր կողմնակի անձեր, առաւելապէս արհեստաւորներ։

ՏՕԿԻՕ, 25 փետրվարի (Մինչև Վլադիվօստօկ պօստով)։ Ներքին գործերի մինիստրութիւնը փակեց եապօնական սօցիալիստական ընկերութիւնը, որպէս վնասակար երկրի խաղաղութեան համար։ Բայց և այնպէս սօցիալիստները վճռել են իրանց գաղափարները տարածել դասախօսութիւնների միջոցով։—Ամերիկայից հեռագրում են, որ Ֆիլիպպեան կղզիների արժէքը 308 միլիօն դոլլար է որոշված.

ՎԼԱԴԻՄԻՐ, 4 մարտի։ Գաւրիլօվսկի արուարձանում—Սուզդալսկի գաւառում, հարևան գիւղերից հաւաքված մի խումբ հարբած մարդիկ, 500 հոգուց բաղկացած, մարտի 1-ին յարձակում գործելով աւերել են մի ճաշարան և սկսել են նոյն մտքով յարձակում գործել պետական գինու խանութի վրա։ Բաւականին համոզեցուցիչ խօսքերից յետոյ՝ վերջ տալու սանձարձակութիւններին՝ ստրաժնիկները համազարկ են տուել։ Վիրաւորվել են 10 հոգի, որոնցից 8-ը մեռել են։ Կարգը վերականգնած է։

ՁԵՐԿԱՍԻ, 4 մարտի։ Սլիպօվկա գիւղում թալանվել է քահանան, միաժամանակ բռնաբարվել է վերջինիս աղջիկը։ Քահանան վախճանվեց սրտի պայթիւնից, իսկ աղջկայ մայրը խելագարվել է։

ՆԱՆՏ, 4 մարտի։ Գործադուլ արած բանուորների և ժանդարմերիայի միջև ընդհարում առաջացաւ։ Բանուորներից մէկը սպանված է, իսկ 3-ը վիրաւորված։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ՆԵՐՔԻՆ և ԵՐԵԽԱՅՈՑ հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճանիձէի № 36
80—100

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳՆԱՑՔՆԵՐ
(Թիֆլիսի ժամանակով)

Թիֆլիսից դէպի Բաթում	
Պասսաժիր	1 ժամ 24 ր. ցերեկվայ
Մարդատար	8 » 5 » առաւօտեան
»	11 » 8 » գիշերվայ
Թիֆլիսից դէպի Բագու	
Մարդատար	9 ժամ 13 ր. առաւօտ.
Պասսաժիր	7 » 48 » երեկոյեան
Մարդ.-ապրանք.	11 » 38 » »
Թիֆլիսից դէպի Երևան	
Պասսաժիր	12 ժամ 40 ր. գիշերվայ

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. Զախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՅԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը {առաւ. 10—12 ժ.
Տէլէֆօն № 1087
Սօլօլակ, Լերմօնտօվսկայա փող., 16.
(ա. օ.) 111—150

Լոյս են տեսել
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆԻ

«Գծագրութեան և նկարչութեան» ա. մաս. ա. գծեր և անկիւններ, ձևեր, պարզ մարմիններ	20 կ.
«Գծագրութեան օրինակներ», տետրակ ա. ուղիղ գծեր	20 կ.
«Գծագրութեան օրինակներ», տետրակ բ. կոր գծեր	20 կ.
«Գծագրութեան օրինակներ», տետրակ գ. պարզ ձևեր, առարկաներ, զարդեր (մի քանի գոյներով)	35 կ.

Գլխաւոր պահեստը «Գուտտենբերգ» գրավաճառանոցում։
1—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինովսկայա փողոց № 8.
(ե. հ. շ.) 32—100

Լոյս տեսաւ
«ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԳԵՂԵՑԻԿ ԳԻՐՔ»
կազմեց
Ա. ԱՐԱՄԵԱՆ
Գինն է 60 կ.
Դիմել «Գուտտենբերգ» գրավաճառանոցը։
4—5

„Գուտտենբերգ"
գրավաճառանոցում վաճառվում են
Արիւնի Աւետարանը
Թարգմ. ֆրանսերէնից Դրամատիկական անցք մի գործողութեամբ
Տիգրան Զաւէնի
Գինն է պօստի ծախքով 30 կ.։
Ցանկացողները կարող են ուղարկել և պօստի մարկաներ։

Նոյն տեղը վաճառվում են հետևեալ նոր հրատարակութիւնները
Աշխարհի ամենագեղեցիկ գիրքը, Ա. Արամեանի գ. 60 կ.։
Ամենուն տարեցոյցը, (1907 թ. սեզոնի օրացոյց հարուստ բովանդակութիւնով) Թէօդիկի գ. Պօլսի տիպ. գ. 1 ր.
Ինչ է սահմանադրութիւն, Մ.—Աղասի, գ. 10 կ.
Իմ երգերը, Մարինի, գ. 30 կ.
Պարզ կեանք, Վաղինեի, գ. 35 կ.
Հին օրեր, Միսաքեանի, գ. 75 կ.
[illegible]
[illegible] գ. 1 ր.
[illegible] 10 կ.
[illegible] գ. 5 կ.
[illegible] Բ. Ս. գ. 20 կ.
Դիմել Тифлисъ, книжны магазинъ Гуттенбергъ, Г. И. Галустянцу. 3—3

ՏԻԿ. Ե. Մ. ՆԱՓԻՐԵԱՆԻ
ՀՕՂԵՐԻՑ, որ գտնվում է Արսենալի մօտ, յայտարարում ենք ի գիտութիւն [illegible], որ կարող են դիմել Կովկասեան գրավաճառանոցում ժամը 12-ից մինչև 2-ը ամեն օր. գրավաճառանոցը գտնվում է Ալեքսանդրեան այգու դիմաց, «Լօնդօն» հիւրանոցի տակը։ Գների համար կը յայտարարվի առանձին։
(ա. օ.) 9—20

Ե. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ
I
ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ
ՌՈՒՍԵՐԷՆԻՑ ՀԱՅԵՐԷՆ
Գինը 8 ր., կազմով 8 ր. 60 կ., 9 ր., 10 ր. և աւելի, նայած կազմին։ [illegible] հեղինակի վրայ։
II
ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ
ՀԱՅԵՐԷՆԻՑ ՌՈՒՍԵՐԷՆ
Լոյս տեսաւ ԵՐԿՐՈՐԴ պրակը։ Ամբողջ բառարանի բաժանորդագինը 5 ր., առաջին բառարանի հին բաժանորդների և գնողների համար 4 ր. [illegible] (Тифлисъ, Армянская Духовная Нерсисянъ Семинарія).
III
Գրպանի բառարան ռուսերէնից հայերէն։ Բաժանորդագինը 2 ր. 50 կոպ.։
օր. մ. 8—10

Հայոց Ազգագրական Ընկերութեան
հրատարակութեամբ
լոյս տեսաւ
պատկերազարդ եռամսեայ
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ
1907 թ. № 1. (XV գիրք)
Բովանդակութիւն. Հայ ժողովրդական վէպը՝ Մ. Աբեղեանի. Համմուրաբիի օրէնսդիրքը Լ. Բաբայեանի. Դաւիթ վարդապետ Ալավկայ որդի Կ. Կոստանեանի. Հայոց ժառանգական իրաւունքը Ն. Ամատունեանի. [illegible] Ե. Լալայեանի. [illegible]
Գիրքը զարդարված է 25 պատկերներով
Տարեկան բաժանորդագինն է 5 ր., մի գիրքը 1 50 կ. № 2 լոյս կը տեսնի մայիսին։
Դիմել՝ Въ редакцію журнала «Азгагракань андесъ», Тифлисъ. 1—10

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ «ՄՈՒՐՃԻ»
№ 2
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
1) ԲՐԱՆԴ դրամատիկական պօէմա հինգ գործողութեամբ Հենրիկ Իբսենի . . . . . .
2) ԱՐՁԱԳԱՆՔ, բանաստեղծութիւն, Յովհ.-Փեր-ի . . .
3) ՄՈՎՍԷՍ ԹԷ ԴԱՐՎԻՆ? Պրօֆ. Ա. Դոդելի . . . .
4) ԴՐՍԻ ՋՈՀԵՐ, (պատմուածք) Գաղթականի . . .
5) ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԷՍԿԻԶ, Ե. Բաղաթուրի . . . .
6) ՄՕՏԻԿ ԱՆՑԵԱԼԻՑ, Անկախի . . . . . .
7) ԻՆՉ ԵՆ ՈՒԶՈՒՄ ՍՕՑԻԱԼ-ԴԵՄՕԿՐԱՏՆԵՐԸ Գէդ և Լաֆարգի D.-ի
8) ԿԱՐԼ ՄԱՐՔՍԸ ԵՒ ՄԱՐՔՍԻԶՄԸ Բ. Իշխանեանի . .
9) ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ 1) [illegible] 3) «Начальная русская хрестоматія для армянъ», составилъ Седракъ Мандинянъ, 1-ая книжка. [illegible]
10) ՆՈՐ ՍՏԱՑԱԾ ԳՐՔԵՐ . . . .
11) Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ .
12) ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երկրորդ Պետական Դումայի— Մեր կացութիւնը . . . . . .
13) ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. [illegible] . . . . .
14) ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ . . . . . .
15) ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ . . . .

Բացված է բաժանորդագրութիւն
ՀԱՅԵԼԻ
Գեղարուեստական երգիծաբանական պատկերազարդ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ,
որը երեքշաբթի լոյս կը տեսնի «Հայելիի յաւելուած» անուան տակ։
Տարեկան բաժանորդները կը ստանան՝
1) 50 № «Հայելի», 2) 12 գեղարուեստական նկարներ, որ տարվայ վերջը [illegible] 3) 2 մեծադիր գունաւոր պատկեր հայկական կեանքից (75×100 սմ.) [illegible] 4) 1 պատ. տարեկան պատկերազարդ Օրացոյց 1908 թ. 5) 1 յայտնի հայ երգիծաբանների խմբական նկարը։
Բաժանորդագրութեան տարին է նոյեմբերից։
Տարեկան գինը [illegible] Թիֆլիսում՝ 4 ր., դուրսը՝ 5 րուբ. կէս տարին՝ 2 ր. [illegible] 2 ր. 50 կոպ. [illegible] 6 րուբլի, կէս տարին 3 րուբլի։
ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ ԱՄԵՆ ՏԵՂ, ԹԷ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՒ ԹԷ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ ԱՐԺԷ 10 ԿՈՊԷԿ
[illegible]
ԾԱՆՕԹ.—Գեղարուեստական նկար [illegible] 3 րուբլի։
Հասցէ՝ Тифлисъ, Редакція «Аели», Дворцовая ул. № 3 կամ Tiflis, Rédaction Journal «Haeli» [illegible]
Խմբագիր՝ Վ. Պետրոսեան, Հրատարակիչ՝ Բ. Ճէլէպեան
(եր. հինգշ. և շաբ.) 40—3

Каждая практическая хозяйка употребляетъ
ЧИСТЫЙ ГОЛЛАНДСКІЙ
КАКАО
БЕНСДОРПЪ
признавая его качества.
Вы берете лишь 1/2 того количества, какое нужно взять иного какао и получаете наилучшій напитокъ.
Наша желтая обертка гарантируетъ
ЧИСТОТУ ДОБРОКАЧЕСТВЕННОСТЬ ЭКОНОМІЮ.

Ներկայացուցիչ Թիֆլիսի համար՝ Марксъ Познеръ въ Лодзи.
12, 20, 6, 3—3

Մարտի 6-ին, առաւօտեան ժամը 12-ին
Արտիստական ընկերութեան շէնքում մէջ
ՆՇԱՆԱԿՎԱԾ Է
Հայոց Դրամատիկական Ընկերութեան
Ընդհանուր ժողով
ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ
1) Վարչութեան պ. պ. [illegible]
2) Ընտրութիւններ
3) Զեկուցումն Վարչութեան առաջիկայ թատրոնական սեզոնի մասին
(փ. 25, 29, մար. 6,) 3—3

Տպարան «ՀԵՐՄԷՍ» Ընկ.
Элект Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 5.